

ՍՅՈՒՆԻԱՍ ԱՇԽԱՐՀ

Շնորհակալություն, Ֆրանսիա

Գինը 100 դրամ:

ԵՐԵՎԱՆԻ

31 ԴՈՒՆԻՍԻ 2012

№ 2 (243)

www.syuniacyerkir.am



Ֆրանսիայի Սենատը ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը

ՀԱՅ ՂԱՏ

127, դեմ՝ 86 սենատոր:

Հունվարի 23-ին Ֆրանսիայի խորհրդարանի Վերին պալատը՝ Սենատը, ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը: Քվեարկությանը մասնակցել է 213 սենատոր: Օրինագիծն կողմ է քվեարկել

Օրինագիծը՝ որպես պատժանիչ, նախատեսում էր մեկ տարվա ազատազրկում կամ տուգանք՝ 45 հազար եվրոյի չափով: Օրինագիծն հեղինակն է Ֆրանսիայի Ազգային ժողովի մարտեցի պատգամավոր Վալերի Բուայեն, որին այս

օրինագիծն պատճառով Ֆրանսիայի թուրքերը նույնիսկ սպառնացել էին:

Հիշեցնենք, որ Ֆրանսիայի Ազգային ժողովը 2011-ի դեկտեմբերի 22-ին ձայների մեծամասնությամբ ընդունեց օրինագիծը, որը թե՛ քննարկումների պատճառ դարձավ Թուրքիա-Շարունակությունը՝ էջ 4

Մեծամասնական ընտրակարգը մեր քաղաքական համակարգի ամենամեծ սուլուն է, որից պետք է հրաժարվել

ԸՆԾՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՊԻՐԸ

«ժառանգություն» եւ ՀՀԳ կուսակցությունների խորհրդարանական խմբակցությունները համատեղ շրջանառության մեջ են դրել «Ընտրական օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին օրինագիծը, որով առաջարկվում է Ազգային ժողովի ներկայիս խառն ընտրակարգից անցում կատարել 100 տոկոս համամասնական ընտրակարգի:

Մեծամասնական ընտրակարգից հրաժարվելու վերաբերյալ խորհրդարանական երկու ընդդիմադիր կուսակցության առաջարկը ողջունել են Հայ ազգային կոնգրեսը եւ քաղաքական բազմաթիվ կուսակցություններ, քաղաքական ու քաղաքացիական խմբեր ու մտավորականներ: Վերջին օրերի իրադարձությունները ցույց են տալիս, որ այդ առաջարկությունը պաշտպանում են նաեւ կոալիցիոն քաղաքական ուժերի՝ ԲՀԿ-ի եւ ՕԵԿ-ի որոշ ներկայացուցիչներ: Մեծամասնական ընտրակարգի պահպանման հա-

մար պայքարում ՀՀԿ-ն, ըստ էության, մնացել է մենակ:

Մեր ընթերցողներից ստացվող արձագանքները վկայում են, որ Սյունիքի մարզում նույնպես ընտրողների զգալի մասը դեմ է մեծամասնական ընտրակարգին: Շատերի կարծիքով՝ մեծամասնական ընտրակարգը, այդ կարգով «ընտրված» պատգամավորների անփառունակ գործունեությունը ցույց են տալիս, որ այն լրջագույն ծաղր է տարածքների, այդ թվում՝ Սյունիքի եւ սյունեցիների հանդեպ: Այդ պատգամավոր կոչվածների ցինիզմն այնքան ակնհայտ է դարձել, որ ուզում են կրկին հայտնվել խորհրդարանում: Նրանք կարծում են, թե Երևանում աճուրդի հանված «դաբրոն» ստանալուց հետո այլևս խնդիր չեն ունենա Սյունիքում: Արհամարհանքը Սյունիքի եւ սյունեցիների հանդեպ այնքան է ահագնացել, որ վայ-պատգամավորները չեն էլ փորձում բացատրություն տալ մարզի ընտրողներին, թե ինչու են անցած չորս տարում խաբել ընտրողներին, թե ինչու չեն կատարել 2007-ի նախընտրական



ՀՀ Ազգային ժողովի շենքը

խոստումները:

«Սյունյաց երկիրը» ողջունում է մեծամասնական ընտրակարգը վերացնելուն միտված նախաձեռնությունը եւ պատրաստակամությունը հայտնում սատարել այդ նախաձեռնությունը կյանքի կոչող քաղաքական ուժերին:

Հերոսապատում

Սյունիքն Արցախյան ազատամարտում

ՆՈՐ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ

«Սյունյաց երկիրը» սկսում է թերթի մի նոր՝ աննախադեպ համարի նախապատրաստության աշխատանքներ, համար, որ կարգադրվի Արցախյան ազատամարտին Սյունիքի մարզի եւ սյունեցիների մասնակցությունը: Համարը կիրառվի 2014-ի փարենսկոպին: Նախապատրաստական աշխատանքներին այդքան ժամանակ տրամադրվել ինքննապարակ չէ: Թեման փարողունակ է եւ պարասխանաբան, հանգամանակից ուսումնասիրություն պահանջող:

«Սյունյաց երկիր» այդ համարը, որ կունենա 200 էջ (A3 ծավալով, մի մասը կավճապատ թղթի վրա եւ զուգավոր տպագրությամբ), նպատակ ունի առաջին անգամ համակարգված, ամբողջական, հավաստի, գիտական խոսք ասել Արցախյան պատերազմին Սյունիքի եւ սյունեցիների մասնակցության մասին: Առաջին անգամ խորությամբ եւ մանրակրկիտ կհետազոտվեն արխիվային նյութերը: Մեծ տեղ կհատկացվի մամուլին՝ եւ տվյալ ժամանակաշրջանի, եւ հաջորդած ժամանակաշրջանի: Պատշաճ ուշադրություն կդարձվի Արցախյան պատերազմի մասին եղած հուշագրություններին, գեղարվեստական, պատմական, փաստագրական գրքերին, գեղարվեստական ու վավերագրական ֆիլմերին:

Համարի նախապատրաստության նպատակով համագործակցության ենք հրավիրում ժամանակակիցներին, ազատամարտի մասնակիցներից յուրաքանչյուրին, այդ օրերի խաղաղ բնակիչներին (ասելիք ունեցող), քաղաքական գործիչներին, զորահրամանատարներին, զոհված ազատամարտիկների հարազատներին, զինկոմիսարիատներին, համայնքային իշխանություններին, մարզի տարածքում տեղաբաշխված զորամիավորումներին, երկրագիտական թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, միջնակարգ մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններին, ոստիկանության տարածքային բաժիններին:

Մեզ համար շատ կարեւոր են յուրաքանչյուրի աջակցությունը, ամենափոքր հուշն ու գրառումը, ամեն մի լուսանկար, ամեն մի տեսապատկեր:

Ժամրային առումով սահմանափակում չկա, խմբագրություն ներկայացվող նյութերը կարող են լինել ակնարկների, հուշագրությունների, հարցազրույցների, ուսումնասիրությունների, հետազոտությունների, մեկնազրույցների, գեղարվեստական խոսքի ցանկացած ժանրի տեսքով:

Համայնքային իշխանություններից, զինկոմիսարիատներից ակնկալում ենք ստանալ բոլոր զոհված ազատամարտիկների կենսագրությունն ու լուսանկարը, ինչպես եւ բոլոր մասնակիցների ցուցակներն ըստ համայնքների:

Ինքնապաշտպանական ջոկատների, մյուս միավորումների հրամանատարներից (նրանց փոխարինողներից) ակնկալում ենք ստանալ իրենց ջոկատների (միավորումների) պատմությունն ու մարտական ուղին, ջոկատի անդամների անունները, մարտա-

Շարունակությունը՝ էջ 2

Ագարակում շուկրով կգործարկվի արդիականացված հարստացուցիչ ֆաբրիկան

ՀԱՐՑԱԶԳՐՈՒՅՑ ՀԱՍԱՐԻՆ

«Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Սերգեյ Պոլովինկինի հետ մեր զրույցը, որ տեղի ունեցավ հունվարի 19-ին, վերաբերում է ձեռնարկության արդիականացման ծրագրի իրականացման ընթացքին, ինչպես էլ ՓԲԸ-ի առջև ծառայած հիմնախնդիրների լուծմանը:

– Պարոն Պոլովինկին, մեր նախորդ զրույցի ժամանակ նշեցիք, որ արտադրության համալիր մոնթե՝նացման շնորհիվ նախատեսվում է ավելացնել հանքաքարի արդյունահանումը, հանքաքարից մետաղների կորզման տոկոսն ավելացնել: Որքանով հնարավոր եղավ իրականացնել Ձեր նախանշած ծրագիրը, ի՞նչ հասցրեցիք անել:

– Հետևողականորեն մենք իրականացնում ենք Ձեր նշածը, ձեռնարկության վերականգնումը գործնականում ավարտվել է, նախատեսվում է հարստացուցիչ ֆաբրիկայի գլխավոր մասնաշենքը փորձարկել փետրվարի 1-ին, դա նշանակում է սարքավորումները ջուր մղել, այնուհետև մշակել տեխնոլոգիական գործընթացները: Մի խոսքով, վերականգնումը կարելի է ավարտված համարել, այդ մասնաշենքում արդեն կարելի է ինչ-որ բան տեսնել եւ ցուցադրել: Այդ ամենը հնարավոր եղավ իրականացնել Հայաստանի կառավարության հատկացրած վարկի շնորհիվ, մենք էլ վարկեր վերցրինք: Մասնաշենքի պաշտոնական բացումը տեղի կունենա մարտի վերջին, որին նախատեսվում ենք հրավիրել հանրապետության նախագահին, վարչապետին, «Մեխանոր» միջազգային ընկերության նախագծողների, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին:

Շատ բան է արվել բաց հանքում հանքավայրի շահագործման արդյունավետությունը բարձրացնելու համար: Այս տարի հանքաքարի արդյունահանումը կհասցնենք 3.5 միլիոն տոննայի (մինչ այդ 3 միլիոն



Սերգեյ Պոլովինկին

տոննա էր), մակաբացման աշխատանքների ծավալները եւս երկու անգամ կազմեն՝ 2.5 միլիոն խորանարդ մետրի փոխարեն հասնելով 3 միլիոնի: Շարունակելու ենք արտադրության վերազինումը, արդեն ճանապարհին են եւ շուտով բաց հանքում մշտական գրանցում կստանան «Բելազ» մակնիշի հինգ ինքնաթափ, հիդրավլիկական պոմպերով նոր էքսկավատորներ:

– Ձեռնարկության ի՞նչ կտա հանքահարստացուցիչ ֆաբրիկայի վերականգնումը, այդ մասին ավելի համաձայնե՞նք:

– Մետաղների կորզման տոկոսը կաճի, արտադրական թափոնի քանակը կնվազի, ավելի շատ խտանյութ, ավելի քիչ թափոն, – սա է մեր նպատակը, ինչը կավելացնի ձեռնարկության շահույթը: Ֆաբրիկայում նոր սարքավորումներ են տեղադրվում, ինչը ենթադրում

է տեխնոլոգիական վթարների քանակի նվազում, բացի դրանից, այդ սարքավորումներն ավելի արտադրողական են, ցվազ ենթադրաբար, դրանք ավելի ժամանակակից են, հանքաքարի հարստացման գործընթացում ավելի քիչ հակազդիչներ են օգտագործվում:

– Եվս մի փաստ մեր նախորդ զրույցից: Նշել էիք, որ մակաբացման աշխատանքներ տարիներ ի վեր չեն իրականացվել:

– Այդպես է, այդ բացթողումը մենք ակտիվորեն շտկում ենք: Բանն այն է, որ այդ ոլորտում հետ մնալը տասնամյակների պատմություն ունի: Մեր հաշվարկներով ամենաքիչը հինգ տարի կպահանջվի բացը վերացնելու համար: 20 տարվա պարտքը երկու տարում չես մարի: Լսենք այսպես. մենք գործում ենք հստակ նախանշված ծրագրով: Մակաբացման աշխատանքների այն

մասը, որն անհրաժեշտ էր անել այժմ հանքաքար արդյունահանելու համար, մենք կատարել ենք, դեռ մի բան էլ ավելի:

– Մետաղական բորսայում ինչպիսի՞ն են պղնձի եւ մոլիբդենի գները: Ի վերջո, դրանցով է պայմանավորված ձեռնարկության շահութաբերությունը:

– Պղնձի համար բորսայում կարգին գին է սահմանված, մոլիբդենի գինը, ցավոք, իջել է, ինչ արած, պիտի աշխատենք: Ձեռնարկությունում, բացահայտ պիտի ասեն, ֆինանսական լարված վիճակ է այն պատճառով, որ այն, ինչ չի կատարվել 20 տարի շարունակ, այսօր ենք անում, խողովակը չեն ներկել, ինչ-որ տեղ հաղորդակարգ ճիշտ չեն փաթաթել եւ այլն, եւ այլն: Եվ դա անում ենք այսօր: Բոլոր բացթողումները պիտի շտկենք առաջիկա երկու-երեք տա-
Շարունակությունը՝ էջ 6

Հերոսապարում

Այուրյան Արցախյան ազատամարտում

ՆՈՐ ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ

Սկիզբ՝ էջ 1

կան կոնկրետ գործողությունների մասին պատումներ:

Ոստիկանության տարածքային բաժիններից ակնկալում ենք ստանալ համազանցակից տեղեկանք առ այն, թե տվյալ բաժինը՝ իր անձնակազմով, ինչպիսի մասնակցություն է ունեցել պատերազմին ու սահմանների պաշտպանությանը (կարևոր է ժամանակի, մարդկանց անունների, ռազմական կոնկրետ գործողությունների, տեղանունների ճիշտ նշումը):

Մարզի բոլոր համայնքների ղեկավարներին խնդրում ենք խմբագրություն ներկայացնել պատմական ակնարկներ այն մասին, թե իրենց համայնքն ինչպիսի կոնկրետ մասնակցություն է ունեցել Արցախյան պատերազմում:

Ակնկալում ենք ստանալ զրույցներ, հուշեր, ակնարկներ մարզի

բնակավայրերի ռմբակոծումների, խաղաղ բնակչության գործողությունների մասին:

Սոցիալական մարմիններից ակնկալում ենք ստանալ պատերազմի ժամանակ վիրավորվածների, հաշմանդամ դարձածների տվյալները եւ նրանց ներկա գործունեությունն արտացոլող տեղեկություններ:

Պատերազմի ժամանակ, անշուշտ, ծնվել են երգեր, բանաստեղծություններ, գեղարվեստական բնույթի այլ գործեր, որոնք նույնպես կուզենայինք ունենալ մեր ձեռքի տակ: Ի՞նչ երգեր են երգել մեր ազատամարտիկները. դա նույնպես հետաքրքրում է մեզ:

Մենք խնդրանք ենք ուղղում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բոլոր զորահրամանատարներին՝ Արցախյան պատերազմին մասնակցած. անպայման ժամանակ գտնել ու թղթին հանձնել ձեր հուշերը եւ ուղարկել մեզ, եթե Այուրյան մարզի, այուրյան ջոկատ-

ների հետ առնչություն եք ունեցել:

Մենք խնդրում ենք մարզի տարածքում տեղաբաշխված բոլոր զորամասերի հրամանատարներին՝ ուղարկել ձեր զորամասի անցած մարտական ուղին արտացոլող համազանցակից տեղեկանք:

Նախատեսվող համարում պատշաճ խոսք կասվի հայոց ազգային բանակի ստեղծման գործում Այուրյանի ու այուրյանցիների մասնակցության մասին: Խոսք կասվի այն զորահրամանատարների մասին, ովքեր այդ ընթացքում մեր սահմանամերձում գլխավորել են ռազմական գործողություններ:

Կարևոր ենք համարում տեղական իշխանությունների գործունեությունն այդ ընթացքում, մարզի սահմանային գյուղերի առօրյա: Կանոնադառնալից Արցախյան պատերազմի այուրյանցի նահատակների հիշատակի հավերժացման ուղղությամբ կատարված ու կատարվող աշխատանքներին:

Մենք կխրախուսենք բոլոր այն նախաձեռնությունները, որոնք համարի նախապատրաստության ընթացքում միտված կլինեն թեմայի վերաբերյալ գեղարվեստական գործերի, պատմագիտական հետազոտությունների ստեղծմանը:

Ապագա համարի կառուցման կոնցեպցիան վերջնականապես ճշտված չէ, ուստի եւս ակնկալում ենք առաջարկություններ այդ առումով:

Նյութերը խմբագրություն ներկայացնելու ժամկետը 2012թ. ամբողջ ընթացքն է՝ մինչև դեկտեմբեր: 2013-ը հիմնականում կմվիրենք հավաքված, ձեռք բերված նյութերի մշակմանը:

«Այուրյաց երկիրը» նախապես երախտագիտություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր կհամագործակցեն խմբագրության հետ՝ չափազանց պատասխանատու այդ գործն իրագործելու համար:

«Այուրյաց երկիր» հետ այդ հարցով համագործակցել ցանկացողները կարող են այցելել խմբագրություն կամ հեռախոսով, էլ փոստով, նամակագրությամբ հաղորդակցվել խմբագրության հետ, համոզման կամ կոնկրետ հարցերի քննարկման համար իրենց մոտ հրավիրել խմբագրության աշխատակիցներին: Մի խոսքով՝ պատրաստ ենք համագործակցության բոլոր ձևերին եւ սպասում ենք ձեր արձագանքներին ու առաջարկություններին:

Հարգանքով՝ «Այուրյաց երկիր»

Լուրեր

Ոստիկանության համակարգում տեղի ունեցող կադրային վերադասավորումները ջրապատկան մեջ են ամել նաեւ Այուրյանի մարզը: Հունվարի 18-ին աշխատանքից ազատվել եւ կարգերի ռեզերվ է ուղարկվել ոստիկանության Կապանի բաժնի պետ Արմեն Գեւորգյանը: Նրա փոխարեն այդ պաշտոնում նշանակվել է Սիսիանի բաժնի պետ Արա Դավթյանը, իսկ Սիսիանում պետ է նշանակվել Գորիսի բաժնի ղեկավար Գուրգեն Բեգլարյանը:

ՀՀ կառավարության 2012թ. հունվարի 12-ի №5-Ն որոշմամբ Տաշտունի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ 0.75հա հողեր փոխադրվել են էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոքր հեկտերի եւ օժանդակ կառույցների շինարարության համար:

2011թ. դեկտեմբերի 16-ին Քաջարան գյուղ է այցելել ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատանքային խումբը՝ ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի №627-Ն որոշման կիրարկման հետևանքով ի հայտ եկած հիմնախնդիրների եւ հնարավոր հետևանքների ուսումնասիրության նպատակով: ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ Ա.Բախչյանի գլխավորությամբ աշխատանքային խումբը որոշել է՝ «Առաջարկել «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը՝ ուսումնասիրել արդյունահանման այլընտրանքային ուղիներ եւ ներկայացնել խնդրի կարգավորման վերաբերյալ առաջարկություն»: Աշխատանքային խմբի 11 անդամից 10-ը կողմ է արտահայտվել այդ որոշմանը՝ դրանով իսկ դեմ արտահայտվել կառավարության հայտնի որոշման կիրարկմանը: Միայն ոմն Ա.Ղոնյան, ով «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի իրավաբանական – պայմանագրային ծառայության պետն է, նշել է, որ «...Հանքը չշահագործելը կտանի ԶՊՄԿ-ի փակմանը», ինչը լուրջ վերաբերմունքի չի արժանացնել աշխատանքային խմբի մյուս անդամների կողմից:

Համացանցում հայտնված տեղեկությունների համաձայն ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտարարել է, որ Քաջարան գյուղի իրավիճակն իրեն ճիշտ չեն ներկայացրել: Ըստ նույն աղբյուրի՝ Տիգրան Սարգսյանն այդ առիթով պատրաստվում է հայտարարություն անել: Թեմն դրանից հետո անցել է 15 օր, բայց վարչապետի խոստացած հայտարարությունն այդպես էլ լույս աշխարհ չի եկել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կ.Անդրեասյանը հունվարի 9-ին նամակ է հղել Քաջարան գյուղական համայնքի ղեկավար Ռաֆիկ Աբայանին: Մարդու իրավունքների պաշտպանը խնդրել է նրան՝ 7-օրյա ժամկետում տեղեկություններ ներկայացնել խնդրի առարկա հարցի վերաբերյալ:

Հունվարի 25-ին (ըստ Քաջարան գյուղից ստացված տեղեկատվության) Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ էր այցելել Հայաստանում Գերմանիայի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Հանս-Յոհեն Ծմիրտը: Դեսպանը Քաջարան գյուղ չի այցելել, թեւս այնտեղ սպասում էին նրան:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

Տարվա գլխավոր հարցերից մեկը. կապահպանեն՞ իրենց արժույթները մարզի գործող քաղաքապետերը

Նախընտրական բուռն վերադասավորումներ ապրող Հայաստանում մի փոքր ուշացումով քաղաքական արթնություն է ապրում նաև Սյունիքի մարզը: Ավելի ճիշտ՝ Սյունիքն արդեն իսկ ներքաղաքական զարգացումների ջրապտույտի մեջ է:

Տարվա գլխավոր քաղաքական իրադարձությունը, իհարկե, Ազգային ժողովի ընտրություններն են, որոնք, ամենայն հավանականությամբ, տեղի կունենան մայիսին: Հենց դրա շուրջ էլ մարզում տեղի են ունենում ուշագրավ իրադարձություններ, որոնց լուսաբանումն այս հրապարակման խնդրից դուրս է: Ինչ-որ առումով ոչ պակաս իրադարձություն են ՏԻՄ ընտրությունները, հատկապես՝ Կապանի, Սիսիանի, Քաջարանի, Մեղրու եւ Ագարակի քաղաքապետերի ընտրությունը: Որքան էլ տարօրինակ է, այդ մասին մեզանում ակտիվ խոսակցություններ սկիզբ առան ամիսներ առաջ: Դեռևս 2011-ի ապրիլի 14-ին («Սյունյաց երկիր» №7) Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը հայտարարեց. «2012-ին առաջադրելու են թեկնածություն քաղաքապետ վերընտրվելու համար, ես դեռ անելիք ունեմ, դեռ տալու բան ունեմ համայնքին»: Վարդան Գեւորգյանը, ով կենսագրություն ունի եւ տարիների փորձ, վայելում է Սյունիքի մարզապետարանի ու ՀՀ պրոզ դեկավարների բացահայտ աջակցությունը: Մաքսիմ Հակոբյանի եւ Վարդան Գեւորգյանի միջեւ եղած հակասությունը՝ պայմանավորված «ԶԴՄԿ» ՓԲ ընկերության սոցիալական օբյեկտների կեղծ սեփականաշնորհումը վերանայելու խնդրով, քվեացյալ է եւ չի կարելի լուրջ հանգամանք համարել այս պարագայում: Այդ ամենով հանդերձ՝ Վարդան Գեւորգյանը շարունակում է մնալ ամենացանկալի թեկնածուն Մաքսիմ Հակոբյանի թիմի համար: Ավելին, Վարդան Գեւորգյանի չընտրվելու դեպքում Մաքսիմ Հակոբյանը Քաջարան քաղաքում կունենա ավելի մեծ պրոբլեմներ, քան Քաջարան գյուղում: Վարդան Գեւորգյանի կշիռը երեւում է հատկապես հիմա, երբ Քաջարան գյուղը ապստամբել է տեղական՝ ամիսներ առաջ ամենագորավորը համարվող կլանի դեմ: Այնպես որ՝ Քաջարանի գործող քաղաքապետի վերընտրությունը նախեստառաջ բխում է այնտեղ իշխող կլանի շահերից: Իհարկե, կոմբինատի վարչակազմի շեքի տաքուկ անկյուններում կան պատասպարված մի քանի հոգի, ովքեր կցանկանային զբաղեցնել Քաջարանի քաղաքապետի աթոռը, ովքեր վայելում են տնօրենի օգնականների հովանավորությունը: Բայց... Նրանց երազանքներն իրականություն չեն դառնա, քանի որ կլանը, ինչպես արդեն երեւում է, Քաջարանում երկրորդ ճակատ բացելու ռեսուրս չունի:



ԱՐԱՄ ԿԱԿՈԲՅԱՆ, Սիսիանի քաղաքապետ



ԱՐՏՈՒՐ ԱՐՁԱՅԱՆ, Կապանի քաղաքապետ



ԿՐՐԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ, Քաջարանի քաղաքապետ



ՍԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Մեղրիի քաղաքապետ



ՍԽԻԹԱՐ ԶԱԵՐՅԱՆ, Ագարակի քաղաքապետ

կորջանյանը, կարծեք, այդ ճանապարհին պետք է հաղթահարի որոշ դժվարություններ: Մեր ունեցած տեղեկություններով, քաղաքապետի աթոռի համար առաջիկա պայքարին կմասնակցի նաև Սիսիանի առաջին քաղաքապետ Գառնիկ Հովակիմյանը, ով ՀՀ անդամ է: Այդ կուսակցությունից, սակայն, ըստ նախնական տեղեկությունների, քաղաքապետի թեկնածու կառաջադրվի նաև Սամվել Թանգյանը, ով ներկայումս մարզապետարանի գյուղավարչություն է ղեկավարում, ով ՀՀ Սիսիանի շրջանային խորհրդի նախագահն է, ով նախորդ ընտրության ժամանակ առավելության չհասավ Աղասի Հակոբջանյանի հանդեպ: Սիսիանյան զարգացումներում որոշակի դեր կխաղա ՀՀ-ն, որն ավանդաբար կողմնակիցների ստվար ջուկատ է ունեցել եւ ունի այնտեղ: Ըստ որոշ տեղեկությունների՝ չի բացառվում ՀՀ-ի աջակցությունն Աղասի Հակոբջանյանին, ինչի դիմաց ՀՀ-ն Կապանում կատարի գործող քաղաքապետ Արտուր Աբայանին: Բացի այդ, դատելով նախորդ տարիների փորձից, Սիսիանում այնքան էլ հեշտ չի լինի ՀՀ-ից մեկ միասնական թեկնածուի առաջադրումը: Եթե նույնիսկ ՀՀ-ն պաշտոնապես հռչակի մեկ թեկնածուի անուն, միեւնույն է, նա միասնական չի կարող լինել շատերի համար: Ի վերջո բոլոր տեղերում, նաև Սիսիանում, կուսակցականից վեր կա կլանային-թայֆայական-տեղային շահ, որը

ոչ պակաս նշանակություն կունենա սիսիանյան զարգացումներում: ԲՀ անդամ Աղասի Հակոբջանյանն անցած տարիներին կարողացել է ապահովել վերկուսակցական պահվածք եւ սիսիանցիների աջքուն չի դարձել կուսակցական գործիչ, ինչը դրական հանգամանք պիտի համարել: Ի դեպ, մարզի քաղաքապետերից եւ ոչ մեկի առջեւ անցած երեք տարում այդքան խոչընդոտներ չեն հարուցել (նաև մասնակի ու իրավապահ մարմինների միջոցով), որքան Աղասի Հակոբջանյանի: Հանրապետականները ոչ պակաս դժվարություններ կունենան Կապանում, քանի որ այնտեղ կբախվեն գործող քաղաքապետ Արտուր Աբայանի թիմի հակազորին: Ըստ երկուսի մարզկենտրոնում չի հաջողվի մեկ միասնական ճակատ ձևավորել ընդդեմ Արտուր Աբայանի: ՀՀ շրջանային խորհրդի նախագահ Վաչե Գրիգորյանը մոտ երկու ամիս առաջ հայտարարեց, թե չի քննարկվել դեռևս Կապանի քաղաքապետի թեկնածուի հարցը: Իսկ նախկին քաղաքապետ, ՀՀ-ական Արմեն Կարապետյանը հայտարարեց Կապանի քաղաքապետի թեկնածուի առաջադրվելու իր ստույգ մտադրության մասին, թեև այդ հայտարարությունը վաղաժամ համարեց վերջինիս եղբայրը՝ Արարատ Կարապետյանը, ով նույնպես կարող է թեկնածու լինել ՀՀ-ից: Արտուր Աբայանն այն քչերից մեկն է, ով, իշխանության ղեկին գտնվելով,

առաջացած երկփեղկվածությունը, ինչն ամիսներ առաջ (մեզ հետ ունեցած հարցազրույցում) նկատել էր նաև քաղաքապետ Սերգեյ Հայրապետյանը: Հանրության երկփեղկվածությունը Մեղրիում ավելի կխորանա, եթե «Համայնքների խոչընդոտման եւ միջամայնթային միավորումների ձևավորման մասին» կառավարական հայեցակարգն ինչ-որ չափով շրջափի այդ համայնքների ներկա կարգավիճակը: Վիճակն ավելի կարվի, եթե Մեղրու ամբողջ շրջանը (այդ մասին ներկայումս խոսակցություն է թեւածում Մեղրիում) միավորվի մեկ համայնքի մեջ՝ Մեղրի կենտրոնով: Վերջին այդ տարբերակը Սյունիքի մարզապետ Սուրեն Խաչատրյանն անհեթեթություն է համարում: Բոլոր դեպքերում գործող քաղաքապետը, ով վայելում է Սյունիքի մարզապետարանի եւ ՀՀ համակրանքը, իր իսկ համայնքում հանրության բոլոր խավերի հետ երկխոսելու խնդիր ունի, ինչն ինքն ի գորու է անել:

Ագարակում, շնորհիվ քաղաքապետ Մխիթար Զաքարյանի եւ պղնձամուլիթերեմային կոմբինատի տնօրեն Սերգեյ Պոլովինկինի սերտ համագործակցության ու կոմբինատի անխափան գործունեության, հիմնականում վերականգնվել է համայնքի բարոյահոգեբանական նախկինում խաթարված մթնոլորտը, ինչը, անշուշտ, դրական անդրադարձ է ունենալու Մխիթար Զաքարյանի ընտրական գործերին: Իսկ ինքը դեռևս մեկ տարի առաջ է կրկին առաջադրվելու մտադրություն հայտնել: Համայնքում մի շարք նկատելի փոփոխություններ ձեռնարկված քաղաքապետը, սակայն, համայնքում ունի որոշակի ընդդիմություն, ով, անտարակույս, կփորձի ռեանջ վերցնել 2008-ի պարտության համար: Այդ ուժերն անցած երեք տարում արդեն մի քանի անգամ բախվել են քաղաքապետի ու նրա մերձավորների հետ, ինչին նույնիսկ իրավապահ մարմիններն են միջամտել, ինչն արտացոլվել է մայրաքաղաքային մամուլում:

Վերը շարադրվածը, անշուշտ, որոշակիորեն կախված է Աժ առաջիկա ընտրությունների արդյունքից: Եվ չի բացառվում, որ Աժ ընտրություններից հետո գործ կունենանք նոր՝ առայժմ անտեսանելի իրողությունների հետ: Ուժերի ներկայիս դասավորությունը եւ զարգացման միտումները կարող են որոշակիորեն փոփոխվել ՀՀ-ի ակտիվացման, ինչպես եւ ընդդիմադիր դաշտի՝ նախընտրական ինչ-ինչ հարցերի շուրջ միավորման դեպքում, որի նշանները հատկապես վերջին օրերին երեւում են:

Գորիսի քաղաքապետի ընտրություն չի լինի 2012-ին: Այնտեղ աշնանը տեղի կունենա ավազանու ընտրություն, ինչը, հավանաբար, կանցկացվի ոչ պակաս թե՛ մթնոլորտում, քան 2008-ին՝ ավազանու ընտրության ժամանակ, կամ 2010-ին, երբ գորիսցիները քաղաքապետ էին ընտրում:

Միս այսպիսի պատկեր գոյություն ունի Սյունիքում՝ քաղաքային համայնքների ղեկավարների առաջիկա ընտրությունների նախօրյակին, ինչը, կրկնում ենք, ամեն պահի կարող է հիմնովի փոփոխվել՝ մայրաքաղաքային զարգացումներից կախված:

Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հայտարարությունը



ԱՐՑԱՆՍԱՆ ԴԻՄՆԱՆՆԻԴԻ

Հունվարի 23-ին Սոչիում նախագահներ Սերժ Սարգսյանի, Դմիտրի Մեդվեդևի եւ Իլհամ Ալիևի ռեակտիվ հանդիպումն ավարտվել է համադրող հայտարարության ընդունմամբ: Սպորտը ներկայացնում էնք նախագահների հայտարարության ոչ պաշտոնական թարգմանությունը: Պաշտոնական փաստաթուղթը՝ ռուսերենով, գերեզմվել է Կրեմլի պաշտոնական կայքում:

«Երեք երկրների ղեկավարներն ընդգծեցին 2008 թվականի նոյեմբերի 2-ին Մոսկովյան հռչակագրի ընդունումից ի վեր Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղղությամբ աշխատանքների մեծ ծավալը: Նախագահները հայտարարեցին, որ ինտենսիվ բանակցությունների արդյունքում առաջընթաց է գրանցվել Ղարաբաղյան կարգավորման հիմնարար սկզբունքների համաձայնեցման հարցում:

Հաշվի առնելով Խաղաղ համաձայնության մշակման անցնելու կարեւորությունը՝ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահները պատրաստակամություն հայտնեցին արագացնել հիմնարար սկզբունքների հարցով պայմանավորվածությունների ձեռքբերումը՝ նկատի ունենալով մինչ այժմ կատարված աշխատանքը:

Երկու նախագահները բարձր գնահատեցին Ռուսաստանի Դաշնության եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի

համանախագահ մյուս երկրների միջնորդական գործունեությունը եւ հույս հայտնեցին, որ Ռուսաստանը, ԱՄՆ-ը եւ Ֆրանսիան այդ կարգավորման հետադարձ եւս ակտիվ դերակատարություն կունենան կարգավորման գործում՝ ընդհուպ մինչեւ տարածաշրջանում վերջնական խաղաղության ու կայունության հաստատումը:

Ի գարգացումն 2011 թվականի մարտի 5-ին Սոչիում ընդունված համատեղ հայտարարության դրույթի՝ Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության նախագահներն ի գիտություն ընդունեցին համանախագահների ղեկավարող շփման գծում միջադեպերի հետաքննության մեխանիզմի մասին, որը նրանք մշակել են ԵԱՀԿ գործող նախագահողի անձնակազմի ներկայացուցչի հետ համատեղ, եւ հանձնարարեցին շարունակել այդ աշխատանքը:

Նախագահները վերահաստատեցին, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կոնտեքստում վստահության ամրապնդման ուղիներից մեկը կողմերի միջեւ հունամիտար կապերի զարգացումն է: Այս կապակցությամբ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահները հայտարարեցին իրենց պատրաստակամության մասին՝ նպատակելու մտավորականության, գիտական ու հասարակական շրջանակների ներկայացուցչների միջեւ երկխոսության հետագա ծավալմանը»:

Հացի խնդիր. ուրե՛լ, թե՛ չուրե՛լ

ՄՆՆՆԱՄԹԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Այունիքում հացամթերքի գնային, որակային տարբերությունների՝ առեղծվածային դարձած հարցի շուրջ, կարծես, արդեն խոսակցությունները դադարել են: Եվ քանի որ մարզում գործող որոշ լրատվամիջոցներ իրենց զխավոր նպատակն են համարում «սենսացիաներ» հրատարակելը, այլ ոչ թե առաջնային լուծում պահանջող խնդիրների վերահանումը, ու, կարելի է ասել, ընկել են անկարելորդի հետեւից, փորձեցինք պարզել, թե արդյո՞ք ոլորտում կատարված դրական փոփոխություններն են պատճառը, որ հացի գնի, որակի, սանիտարահիգիենիկ նորմերի հետ կապված խոսակցությունները դադարել են: Պարզվում է՝ վերջին շրջանում եսկան ոչ մի փոփոխություն չի կատարվել, ինչպես առաջ, հիմա էլ հացը վաճառվում է առանց փաթեթավորման, քաշի, գնի, տեսակի, արտադրողի անվանումն արտացոլող պիտակների, վաճառող-վաճառողուհիները չեն հազնում համապատասխան համազգեստ, չկա նաեւ ոչ մի փաստաթուղթ, որ թույլ կտա որոշակի պատկերացում կազմել բաղադրության, հավելումների, խոնավության մասին: ՀՀ սննդամթերքի անվտանգության մասին օրենքի համաձայն սպառողը՝ սնունդ օգտագործելու նպատակով սննդամթերք ձեռքբերող ֆիզիկական անձը, իրավունք ունի պահանջելու փաստաթուղթ, որը պատկերացում կտա վերահիշյալ որակների մասին, որ սննդամթերքի հետ կապված գործառնությունները պետք է իրականացվեն սանիտարական կանոններին եւ հիգիենիկ նորմերին համապատասխանորդ պայմաններում: Սննդամթերքի արտադրողն էլ իրաջան համար հատկացվող տարածքները պետք է կառուցվեն, կահավորվեն, վերանորոգվեն, պահպանվեն եւ օգտագործվեն այնպես, որ այնտեղ տարբեր գործառնությունների ենթարկվող սննդամթերքը քաղաքացիների կյանքի եւ առողջության համար լինի անվտանգ: Ինչպես նաեւ նույն օրենքի մեջ ներդրող հողվածի համաձայն ՀՀ-ում սննդամթերք արտադրող, վերամշակող, փաթեթավորող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը պարտավոր է այն մակնշել հայերենով: Սակնիշը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝ ա) իրացվող սննդամթերքի անվանումը, գտաքաշը կամ ծավալը, եթե սննդամթերքը փաթեթավորված է. բ) սննդային հավելումների ցանկը. գ) արտադրության տարեթիվը, պիտակետի վաճառքի ժամկետը. դ) սննդամթերքի օգտագործման վերաբերյալ ցուցումներ, եթե առանց դրանց այն չի կարող պատշաճորեն օգտագործվել (հատկապես բուժիչ, դիետիկ, մանկական սննդամթերք), առանձնահատուկ հանձնարարականներ դրա պահպանման եւ օգտագործման մասին:

Այդպիսի սննդամթերքի ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը. ե) տվյալներ արտադրողի մասին. գ) սննդամթերքի ծագման երկիրը. լ) ոգելից խմիչքներում պարունակվող ալկոհոլի պարունակության տոկոսը. ը) սննդային եւ տեղեկատվական արժեքը. թ) գծային ծածկագիրը. ժ) նորմատիվ փաստաթղթերով սահմանված այլ տեղեկատվություն: Սակայն ամեն անգամ ինչ-որ անբացատրելի ծուլությամբ կամ թե անհոգությամբ չենք պահանջում ոչ մի փաստաթուղթ: Ի վերջո, երբ շուրջ մեկ ամիս շարունակ առավոտյան հանդիպելով հաց առաքող մի մեքենայի եւ նրա կիսագիտակից աշխատողին, ով ամեն անգամ կից մեքենայի մեջ ձեռք բերում էր հացը, առանց մեքենայից մինչեւ խանութ է տանում, եւ տեսնելով մեքենայի փոշոտ հատակին դրված հացի արկղերը՝ դադարեցի հարակից խանութից հաց գնել: Սակայն ինչ օգուտ, մյուս խանութներում էլ նույն վիճակն էր: Ամբողջ Կապանում, բացառությամբ մեկ-երկու սուպերմարկետի, սննդամթերքի՝ մասնավորապես հացի հիգիենական գտնվում է բարձրորակ վիճակում: Իհարկե, հիմա կասեք, չէ որ գոյություն ունենա ինչ-որ մարմին, որ կատարում է ոլորտի վերահսկողությունը: Մարզում գործում է «Անասնաբուժասանիտարիայի, սննդամ-

թերքի անվտանգության եւ բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը (պետ՝ Կամո Սարգսյան), ուն հավուր պատշաճի ընթերցողին ենք ներկայացնել «Այունյաց երկիր» 2011 թվականի №15-ում: Բայցեւ աչքի անցկացնելով սույն ՊՈԱԿ-ի գործառնությունները, չգտանք այնտեղ որեւէ կետ, որ կվերաբերեր սննդի անվտանգությանն ու ոլորտի վերահսկմանը: Սակայն, եթե հիշյալ կառույցը չէր իրականացնելու այդ գործառնությունը, ապա ինչո՞ւ է ՊՈԱԿ-ի անվտանգ մեջ տեղ գտել «Սննդամթերքի անվտանգություն» արտահայտությունը. տարօրինակ է ու անհասկանալի: Մեզ տված հարցազրույցում «Այունիքի մարզային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Կամո Սարգսյանը ասել էր, թե «ճշտվում է մեր իրավունքների եւ պարտականությունների ցանկը, շուտով մենք դա կունենանք եւ ավելի ստույգ կկարողանանք խոսել սննդամթերքի անվտանգությանն ապահովման հարցի շուրջ»: Մինչ այսօր, չնայած, տնօրենի լրջագույն հայտարարությանը, որեւէ փոփոխություն, գործառնության ճշտում չեն եղել: Չնայած որ այն կազմավորվել է ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 30-ի №173-Ն որոշմամբ, այսինքն շուրջ մեկ տարի է, դեռ գործառնությունների կայուն ցանկ չունի, այսինքն՝ շուրջ մեկ տարի Այունիքում սննդի անվտանգությանն ապահովման հարցի վերաբերող գործառնությունները: Իսկ ի՞նչ գործառնություններ է կատարում «Սննդամթերքի անվտանգության եւ անասնաբուժության պետական տեսչության Այունիքի մարզային կենտրոն» ՊՈԱԿ-ը (պետ՝ Էդգար Թոխասյան), արդյոք ունի՞ մասնաճյուղեր մարզի քաղաքներում, ո՞վքեր են դրանց ղեկավարները, ի՞նչ աշխատանքներ են իրականացնում վերջիններս: «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության եւ բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոնի» «Այունիքի մարզային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի հետ զրույցից պարզ դարձավ, որ մարզի քաղաքներում կան այդպիսի կառույցներ եւ համապատասխան աշխատակիցներ: Որոշեցինք զրուցել նրանցից գոնե մեկի հետ, գոնե ինչ-որ տեղեկատվություն, մեզ հուզող որոշ հարցերի պատասխաններ ստանալու նպատակով: «Այունիքի մարզային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենու կապակցում հեշտապես հեռախոսահամարը եւ նրա ներկայությամբ զանգահարեցինք ոմն Արթուրի, ուն ազգանունը դժվարացան մեզ հայտնել: Վերջինս պատշաճորեն պատասխանեց մեր հեռախոսազանգին եւ ցանկություն հայտնեց հանդիպելու եւ պատասխանել մեր հարցերին, ինչպես նաեւ որպես Կապանի տարածաշրջանի պատասխանատու տրամադրել որոշակի տեղեկատվություն կատարված եւ կատարվելիք աշխատանքների մասին: Սակայն իրադարձությունները կտրուկ շրջադարձ ունեցան: Պարոն Արթուրը զանգահարեց եւ հայտնեց, որ շտապ աշխատանքային այցով երեսուն է մեկնում եւ հանդիպումը տեղափոխեց այլ օր: Սակայն իր իսկ նշած եւ հետագա օրերին նա կամ չէր պատասխանում զանգերին, կամ անջատում էր հեռախոսը: Հետաքրքիր է, թե ի՞նչը ստիպեց նրան փոխել կարծիքը, ինչո՞ւ է վկայուցիայի ենթարկվեց նրա որոշումը, ինչո՞ւ որոշեց պահանջի խաղալ: Միով բանիվ՝ սննդամթերքի անվտանգությանն ոլորտում տիրող քաոսին հավելվում են նաեւ ոլորտի աշխատակիցների արտառոտ պահվածքը, եւ դառնում է մի անհասկանալի շիլաշիթ: Այս ամենը դառնում է երկրորդական, երբ հերթը հասնում է ուտել-չուտելու խնդրին: Շատերը գերադասում են ուտել հին հաց, քանի որ այն պակաս վնասակար է, քան նորը: Փորձագետները զգուշացնում են, որ պոլիէթիլենով փաթեթավորված հացը վտանգավոր է առողջության համար եւ կարող է առաջացնել քաղցկեղ: Իսկ լավաշը ձեռք է բերել թափանցիկ, գերբարակ տեսք:

Ֆրանսիայի Սենատը ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը

ՀԱՅ ԴԱՏ

Սկիզբն էլ 1

յուն: Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը մի շարք սպառնալիքներ ուղղեց Ֆրանսիային: Պաշտոնական Անկարան նույնիսկ հետ կանչեց իր դեսպանին Փարիզից: Երդողանը սպառնացել է, որ եթե Սենատը ընդունի օրինագիծը, ապա Թուրքիան էլ իր որոշումները կիրականացնի: Թե կոնկրետ ինչ որոշումների մասին է խոսքը, թուրք վարչապետը չի մանրամասնել: Ավելին՝ Էրդողանը երդվել է օրինագիծի ընդունման դեպքում այլևս ոտք չդնել Ֆրանսիայ:

Հիշեցնենք, որ Փարիզում ցույցի էին դուրս եկել թե ֆրանսահայերը՝ աջակցելու օրինագիծը ընդունմանը, թե Ֆրանսիայում բնակվող թուրքերը՝ արտահայտելու իրենց դժգոհությունը:

Մտո 7,5 ժամ տևած քննարկումն ավարտվեց Ֆրանսիայի Սենատի կողմից Հայոց Ցեղասպանության հերքումը քրեականացնող օրինագիծը ընդունմամբ: Ավելի վաղ, մեկ ամիս առաջ՝ դեկտեմ-

բերի 22-ին, օրինագիծն ընդունել էր Ֆրանսիայի Ազգային ժողովի ստորին պալատը: Իսկ ավելի ուշ, Ֆրանսիայի Սենատի իրավական հարցերով հանձնաժողովի առաջարկը՝ օրինագիծն անընդունելի լինելու մասին, սենատորների կողմից չէր ընդունվել: Նշենք, որ չորեքշաբթի օրը Սենատի իրավական հարցերով հանձնաժողովն անընդունելի էր համարել նման օրինագիծը եւ առաջարկով էր հանդես եկել՝ չքննարկել ու քվեարկության չդնել լիազումար միտումն ցեղասպանությունների հերքումը քրեականացնող օրինագիծը: Այդ օրինագիծը ժխտման համար նախատեսում է 1 տարվա ազատազրկում կամ 45 հազ. եվրոյի չափով տուգանք: Ֆրանսիայի Սենատում մի անգամ արդեն դրվել է այդօրինակ օրինագիծ, սակայն այն մերժվել էր: Այդ օրինագիծը միայն հայերի ցեղասպանության ժխտումը քրեականացնելու մասին էր, իսկ ներկայիս օրինագիծը վերաբերում է մարդկության դեմ գործած ոճիրներին: Ֆրանսիան պաշտոնապես այդպիսին է համարում հայերի եւ հրեաների ցեղասպանությունը:

«Այս հարստությունը ձեր հեղինակությունն է և պատվանունը»

Քաջարան գյուղի և Ջանգեզուրի պոետիկոլեկտիվի կոմիտեի նախագահ Գրիգոր Գրիգորյանի հարցազրույցը պատվության գերակա շահ ճանաչված հոգեբան և պատմաբան Զոլվան Իսրայելյանի հետ:

Խնդրո՞ւմ եմ հարցազրույցի հարցադրվածները եղան նաև համարակալական մասնակցություն և սոցիալական ցանցերում, որտեղ մեղադրանքներից բացի գործը հասավ անձնական վիրավորանքներ հասցնելուն: Կատարվածի մասին իր մտահոգությունը հայտնելու համար խմբագրություն այցելեց ճանաչված հանրագործ Զոլվան Իսրայելյանը: Ընթերցողին հիշեցնենք, որ նա 47 տարի աշխատել է կոմբինատում, ընդ որում մոտ 25 տարի՝ խորհրդման հաստոցավարների բրիգադավար: 1979-84-ը եղել է ԽՍՀՄ գերագույն խորհրդի պատգամավոր, ԽՍՀՄ 26-րդ համագումարի պատգամավոր, Փառքի 3-րդ աստիճանի և Լենինի շքանշանների սպասետ: Խորհրդային Միության պետական մրցանակի դափնեկիր է: Նա իրեն դրական կողմերով է դրսևորել հասարակական աշխատանքներում, բազմիցս ընտրվել է գունավոր մետալուրգիայի աշխատողների արհմիակցության կոմիտեի անդամ, Քաջարանի քաղախորհրդի պատգամավոր: 1995-ից աշխատում էր լեռնային արտադրամասի պետի՝ տնտեսական գծով տեղակալ: Կենսաբանական է անցել բոլորովին վերջերս՝ 2011-ի դեկտեմբերին:

Վաստակաշատ լեռնագործին իր գյուղի ճակատագրից բացի հուզել էր այն, որ մասնակցությունը եղած վիրավորանքներից բաժին էր հասել իր ընտանիքի անդամ-



Զոլվան Իսրայելյան

ներին:
– Ե՛մարիտն ասած՝ մինչեւ այժմ Քաջարան գյուղի շուրջ ծավալված իրադարձություններին չեմ խառնվել, մտածելով, որ ամեն ինչ իր տեղը կընկնի, բնակավայրի շուրջ առաջացած աղմուկն աստիճանաբար կմարի, պոետը ջրերը կգուլավեն: Բայց երբեք չէի պատկերացնում, որ գործը կհասնի անձնական վիրավորանքներ հասցնելուն, այն էլ Մաքսիմ Զակոբյանի կողմից, որին միշտ հարազատորեն եմ վերաբերվել, երկարատեւ աշխատանքների ընթացքում մեզ կապել են գործընկերային հարաբերությունները՝ նա տեղամասի պետ էր, ես՝ բրիգադավար:

Բանն այն է, երբ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը եղել էր Քաջարան գյուղում, գրուցել գյու-

ղաբնակների հետ, իմ կինը պատասխանել էր մարզպետի հարցին, նաև ասել, որ մարդկանց ուզածն այն է, որ իրենց հանգիստ թողնեն, քանզի իրենք գյուղում բերք ու բարիք են ստեղծում, ինչպես նաև անասուն պահում, եղածից բաժին հանում իրենց երեխաներին: Դա առիթ դարձավ, որ «Առավոտ» թերթի լրագրողի հետ գրուցելիս Մաքսիմ Զակոբյանն ասի. «Մի կին էլ հեռուստատեսությամբ կանգնել, ասում ա, ես անասուն եմ պահում տանը, որ չորս երեխաներիս պահեն»: Ի՞նչ է նշանակում տանն անասուն պահել: Իմ կինը նման հիմար արտահայտություն չի արել: Փաստորեն իմ կնոջ «մեղքն» այն է եղել, որ պատասխանել է մարզպետի հարցին: Բայց մեծարգո տնօրենին տեղեկացնենք, որ ես ապրում եմ իմ հարազատ գյուղի

իմ հայրական տանը, որտեղ ծնվել եմ, ինչպես նաև ծնվել ու մեծացել եմ իմ չորս երեխաները, իսկ այն տանը, որտեղ ապրում է որդիս իր ընտանիքով՝ ես եմ պայմաններ ստեղծել, որ նրանք ազատ ու ինքնուրույն ապրեն, բայց ամբողջությամբ կապված լինեն ծնողների հետ: Իսկ հարսս խելք ու հարգված անձնավորություն է եւ անչափ շատ է սիրում ու հարգում իր կեսուր-կեսրարին:

Յետո շարունակելով խոսքը՝ ավելացնում է, որ *«ամուսինը 70-ն անց մարդ ա...»* Այսինքն՝ ես: Հարգելի Մաքսիմ Զակոբյան, մենք իրար հետ շատ ենք աղուհաց կերել, ես հարգել եմ ոչ միայն քեզ, այլև քո մորը, ով մի հոյակապ կին էր, միշտ հարցնում էի նրա որպիսությունը: Ես եմ մարդը չեմ, ես Զոլվան Իսրայելյան եմ՝ բազում արժանիքներ ունեցող եւ շրջապատում հարգված մարդ:

Սա, ինչպես ասում են, չարաց փոքրագույնն է: Նույն տեղում անդրադառնալով իմ որդուն՝ ասում է. «Տղան (այսինքն՝ իմ տղան) մի քանի անգամ դուրս եկավ (նկատի ունի կոմբինատի խմբ.): զմաց երեսանի փողոցներում քափառեց-եկավ»: Իմ որդին Գարիկ Իսրայելյանն ավարտել է Մոսկվայի լեռնային ինստիտուտը, ցանկանում էր մնալ այնտեղ, բայց իմ հորդորներով (միևնուճար որդիս է), վերադարձավ Քաջարան՝ մի կարծ ժամանակ աշխատեց կոմբինատում, սկզբում որպես էքսկավատորավարի օգնական, այնուհետև նշանակվեց պայթեցնողների հերթափոխի պետ, զորակոչվեց բանակ, ծառայեց Մեղրու սահմանապահ ջոկատում, զորացրվելուց հետո աշխատանքի անցավ կոմբինատի լեռնային արտադրամասում՝ նախ, որպես էքսկավատորավարի

օգնական, այնուհետև նշանակվեց պայթեցնողների ղեկավար: Եղավ մի պահ, որ Գարիկի աները, ով Մաքսիմ Զակոբյանի որդու ավտոպարկն է ղեկավարում Երեւանում, հրավիրեց որդուս աշխատելու այնտեղ: Նա աշխատում էր ոչ իր մասնագիտությամբ, ինչը դուր չէր կալ ինձ: Դարձյալ որդուս բերել տվեցի Քաջարան, դժվարությամբ ընդունվեց աշխատանքի կոմբինատում, աշխատեց հորատապայթեցման տեղամասում՝ որպես վարպետ, հետո տեղափոխեցին տրանսպորտային հանքուղի՝ տեղամասի պետի տեղակալ: Այդ է որդուս «ողիսականը», որի մեջ, կարծում եմ, պախարակելի ոչինչ չկա:

Որքանով տեղյակ եմ, այսքան ժամանակ է, քաջարանցիները կոմբինատի ղեկավարության հանդեպ ոչ մի վատ արարք թույլ չեն տվել կամ վիրավորանք չեն հասցրել, քաջարանցիների (խոսքը Քաջարան գյուղի բնակիչների մասին է խմբ.), մտահոգությունը կառավարության հայտնի որոշումը վերանայելն է: Անհարիր է խնդիրն անձնական դաշտ տեղափոխել, իսկ մարդկանց վարկաբեկելու կամ թշնամություն սերմանելու անհրաժեշտություն բուրդովին չկա: Ես կոմբինատում վաստակ ունեմ եւ այն մարդը չեմ, որ ինձ հետ այդպես վարվեն, անհարկի վիրավորանք հասցնեն:

Որպես մոտ կես դար հանքարդյունաբերությունում անցկացրած անձնավորություն՝ կարծում եմ՝ պետք չէր այս աղմուկը, իմ խորին համոզմամբ՝ նոր համբ բացելու խնդիր չկար, ներկայիս գործող բաց հանքն անսպասելի իր պաշարներով, պետք չէ արդյունահանման ինչ-որ ծավալներ ավելացնել, լրացուցիչ բնագիտական խնդիրներ անաջացնել: Հիշողությանս մեջ թարմ է այն դրվագը, երբ Կարեն Դեմիրճյանն այցելել էր Քաջարան: Լինելով բաց հանքում եւ տեսնելով, թե ինչպես է գլխատվել Գանձասարը, նա կշտամբեց հանքագործներին. «Այս հարստությունը ձեր հետնորդներին էլ է պատկանում»:

ՎԱՐՄ ՕՐԲԵՆԱՍ

Սյունիքի մարզպետարանը լրավորում էր համագործակցության նոր գործընկերային և որդեգրել

Սյունիքի մարզպետը 2011թ. դեկտեմբերի 26-ին նամակ է հղել մայրաքաղաքային մի քանի թերթերի ղեկավարներին: Նույնաբովանդակ նամակներից մեկը եւ հաջորդած զարգացումների մասին տեղեկատվությունը՝ ստորև:

«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր պարոն Արամ Աբրահամյանին

Հարգելի պարոն Աբրահամյան Տարիներ շարունակ Ձեր խմբագրած թերթը լուսաբանել է (եւ բարունակում է լուսաբանել) իմ գործունեությունը, անհայտ (երբեմն գոյություն չունեցող) հեղինակների ստորագրությամբ նյութեր հրատարակում իմ մասին: Դրանք, որպես կանոն, միտված են եղել եւ են իրականության աղավաղմանը, իմ անձի անվանարկմանը, պիտակավորմանը (բացառություններ շատ քիչ են եղել): Եվ ես երբեք չեմ արձագանքել նմանօրինակ հրատարակումներին (թեեւ կարող էի Ձեզ անվանարկել ու Ձեր անձնական եւ աշխատանքային գործունեության մասին նյութեր հրատարակ հանել, ինչպես Դուք եք հաճախ վարվում), երբեք չեմ փորձել դատական կարգով քննարկել կամ վիճարկել դրանց հավաստիությունը: Միշտ մտածել եմ, որ երբեք կվերանայեք Ձեր մոտեցումը, կիրառվեք կանխակալ, նախապես ձեռավորված պատկերացումներից

եւ մարզի, մարզպետարանի, մարզպետի մասին լուսաբանումներում Ձեր անձնական, սուբյեկտիվ մոտեցումները կողք կդնեք: Մինչդեռ՝ չիրաժարվեցիք վաղուց որդեգրած մոտեցումներից: Մյուս կողմից՝ ես անվորով էի վերաբերվում Ձեր հրատարակումներին, քանզի որ մայրաքաղաքային մամուլը մարզերում շատ վաղուց համընդհանր կարծիքի վրա չի ունենում երբեմնի ազդեցությունը կամ ընդհանրապես ազդեցություն չի ունենում (դրա պատճառների մասին խոսակցությունն այլ թեմա է), մանավանդ որ մարդիկ՝ մարզի ամենահեռավոր գյուղում անգամ, տեսնում են իրենց մարզպետի գործունեությունը: Յետայսու ես չեմ պատրաստվում փոխել վերաբերմունքս Ձեր հրատարակումների հանդեպ, չեմ պատրաստվում ոչ վիճարկել, ոչ հերքումներ ուղարկել, կրկնում եմ՝ դա իմ էությունը հարիր չէ: Այդ բոլորով համոզեմ մի առաջարկություն ունեմ: Դուք, գրեթե բոլոր դեպքերում, իմ արած-չարածի, իմ անձի մասին դատողություններ եք անում եւ նյութեր հորինում այլ, կողմնակի աղբյուրներից քաղած տեղեկությունների հիման վրա, ինչը, թույլ տվեք ասել, ոչ միշտ է բարոյական: Առաջարկում եմ Ձեզ՝ երես առ երես հանդիպել մեզ հետ եւ Սյունիքի մարզի, մարզպետարանի, մարզպետի մասին տեղեկություններ ստանալ անմիջապես մարզպետից: Ընդ

որում՝ պատրաստ եմ պատասխանել Ձեր՝ առանց բացառության բոլոր հարցերին՝ թույլատրելի եւ անթույլատրելի, կոռեկտ եւ ոչ կոռեկտ, սահմանները, ցիմիկ եւ ողջամիտ, տնտեսական ու քաղաքական, սոցիալական ու հոգեբանական մարտնչություն: Ի վերջո՝ տեւական ժամանակ Դուք ինձ հայտնում եք եւ չեք ուզում՝ գրեմ մեկ անգամ իմ կարծիքը լսել այն հարցերի մասին, որոնք իբր Ձեզ մտահոգում են: Ուզում եմ նաև երեսերեսի գանք ու պարզեցնեք՝ այդ ի՞նչ եք անում Դուք Յայաստանի Յանապետության, հայ ժողովրդի, մեր պետականության, հայ մարդու արժանապատվության պաշտպանության համար, որ ես չեմ անում եւ որը Ձեզ իրավունք է վերապահում դատավորի դեր ստանձնել ու անընդհատ վիրավորել իմ անձն ու արժանապատվությունը:

Առաջարկում եմ հանդիպում հարցազրույցը կազմակերպել Սյունիքի մարզպետի աշխատասենյակում՝ Ձեզ համար ցանկալի ժամանակ: Առաջարկում եմ, միաժամանակ, Ձեզ հետաքրքրող բոլոր հարցերն ուղարկել առնվազն իննգ օր առաջ, որպեսզի դրանց վերաբերյալ ավելի հիմնավոր ու ամբողջական պատասխաններ պատրաստեն, մանավանդ որ գործող օրենքները նման հնարավորություն են ընձեռում: Հարցազրույցը կձայնագրվի նաև մարզպետարանի տեղեկատվության ու հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատակցի կողմից՝ հետագա աղավաղումներից խույս տալու համար:

Անկախում եմ Ձեր դրական արձագանքը, այլապես Սյունիքի մարզի, մարզպետարանի, մարզպետի մասին Ձեր բոլոր հրատարակումները՝ ենթադրաբար, ասելու ենք իմ մասին վրա, ծայրված կամ անանուն աղբյուրների օգտագործմամբ գրված, առնվազն կհամարեն ոչ անաչառ, անլուրջ, ոչ ազնիվ ու ոչ բարոյական, տեղեկացիոց:

Ավելացնեմ նաև, որ առաջարկվող հանդիպում-հարցազրույցից հետո պատրաստ եմ ավելի ակտիվացնել մեր համագործակցությունը՝ Սյունիքի մարզի առօրյայի լուսաբանման հարցում:

Հարգանքով՝ ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սյունիքի մարզպետ

Հ.Գ. Սույն նամակը հղում եմ նաև «Հրապարակ», «Երկիր», «Իրավունք» թերթերի խմբագիրներին: Եվ քանի որ ես մամուլի ասուլիս չեմ հրավիրում եւ նախատեսում եմ նշված լրատվամիջոցներին ավելի շատ ժամանակ հատկացնել՝ բոլոր հարցերին պատասխանելու համար, ուստի եմ ենթադրում եմ, որ յուրաքանչյուր խմբագիր կառաջարկի հանդիպում-հարցազրույցի՝ իրեն ցանկալի օրն ու ժամը:

Հ.Գ. Սյունիքի մարզպետի առա-

ջարկին արձագանքել են «Առավոտ» (11 հունվարի 2012թ.), «Հրապարակ» (11.12. հունվարի 2012թ.) թերթերը: Ըստ Սյունիքի մարզպետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Աշոտ Քարամյանի, այդ լրատվամիջոցների խմբագրությունները դեռեւս, ներկայացված պայմաններով հարցազրույցի առաջարկ չեն արել: «Սահմանադրական իրավունք» միություն կուսակցության նախագահ Հայկ Բաբուխանյանը, որին նույնպես նամակ էր հղել Սյունիքի մարզպետը, պատասխան գրություն է ուղարկել (11 հունվարի 2012թ.) Սուրեն Խաչատրյանին, որի մեջ մասնավորապես նշված է. «Ձեր առաջարկը՝ երես առ երես հանդիպել Ձեզ հետ եւ անմիջապես Ձեզանից ստանալ տեղեկություններ մարզի վերաբերյալ, ինչպես նաև Ձեր պատրաստակամությունը՝ պատասխանել առանց բացառության բոլոր հարցերին, եւ փոխանցել եմ «Իրավունք» թերթի գլխավոր խմբագիրն եւ նրան հորդորել ընդունել այդ առաջարկը: Մտախառ ժամանակներս թերթի լրագրող կապ կհաստատու Ձեզ հետ՝ հարցազրույց կազմակերպելու նպատակով»: Սյունիքի մարզպետի նամակին դեռեւս չի արձագանքել «Երկիր» թերթը: Այդուհանդերձ, ինչպես նշեց Աշոտ Քարամյանը, Սյունիքի մարզպետարանը բոլոր լրատվամիջոցների հետ (առանց բացառության) ակտիվ համագործակցության գործելակերպ է որդեգրել եւ նմանատիպ վերաբերմունք է ակնկալում լրատվամիջոցներից:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄԱՐԻՆ

Ագարակում շուկով կգործարկվի արդիականացված հարսպագուցիչ ֆաբրիկան



Ֆաբրիկայի նորակառույց շենքը

Սկզբը՝ եջ 2

րում: Այս գրույցից հետո այցելեք եւ տեսեք հանքահարստացուցիչ ֆաբրիկայի նոր մասնաշենքը: Ըստ ամենայնի դա նոր մասնաշենք չէ միայն. հարկ եղավ ամրացնել կառույցի հիմքերը, պատերը, մեծ գումարներ պահանջվեցին այդ վերակառուցումն իրականացնելու համար:

– Իսկ հանրապետության կառավարության հատկացրած 14 մլն ամերիկյան դոլարի վարկն արդեն մարել է:

– Կառավարության վարկը տրամադրվել էր ըստ մեր կողմից կազմված բիզնես-ծրագրի, որը նպատակաւորված էր լեռնահանքային տեխնիկա ձեռք բերելուն եւ ֆաբրիկայի վերակառուցմանը: Վարկի մարումը նախատեսված էր հինգ տարում: Եթե չեն սխալվում, վարկի մարման ժամկետ է սահմանված 2013թ. մայիս ամիսը:

– Այժմ վերստին սկսել են խոսել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի մասին: Փորձագետները նույնիսկ ասում են, որ դա Հայաստանի տնտեսության վրա չի ազդելու, անցնելու է նրա կողքով եւ այլն, եւ այլն: Դուք որպես տնտեսական ղեկավար, ի՞նչ կարծիք ունեք, Չեր ղեկավարած ձեռնարկության վրա զգացվում է այդ ճգնաժամի ազդեցությունը:

– Ես տնտեսագետ չեմ եւ չեմ կարող ռազմավարական կանխատեսումներ անել: Ճգնաժամը կամ նոր է սկսվում կամ մեր կողքով է անցնում: Համեմայնդեպ այնպիսի իրավիճակ չի ստեղծվել, ինչպես նախորդ ճգնաժամի դեպքում, երբ մեր ձեռնարկության արտադրությունը կանգնել էր, մարդիկ կրճատվել կամ հարկադիր պարապուրդի էին մատնվել: Այդ ամենն այժմ չկա: Թեպետ այն էլ ասեմ, որ եակամորթն աճել են վառելիքի, պահեստամասերի, սպառողական ապրանքների գները: Այնուամենայնիվ, իրավիճակը թույլ է տալիս աշխատել եւ նախանշված առաջադրանքները կատարել:

– Ինչպես տեղյակ եք, անցյալ տարի մոտ 600 մեղրեցիների ստորագրությամբ նամակ էր հրապարակվել՝ Մեղրի գետի ճակատագրի հետ կապված: Այդ նամակում ակնարկ կար այն մասին, որ Ագարակի կոմբինատին հավելյալ ջուր է անհրաժեշտ: Ընդհանրապես այդպիսի անհրաժեշտություն կա՞ :

– Դա պոպուլիստական հնարք էր: Կենցաղային կարիքների համար, խոսքը ձեռնարկության մասին է, կոմբինատին ջուր մատակարարվում է Մեղրու ջրբաշխիցից: Իսկ տեխնիկական ջուր վերցնում ենք Արաքս գետից, երեք հորատանցք կա այդ նպատակի համար: Դեռ ավելին, շուտով ձեռնարկության պոչամբարում հարստացուցիչ ֆաբրիկայի կեղտաջրերը մաքրվելու են եւ նորից մղվելու ֆաբրիկա, ինչը զգալիորեն լուծելու է տեխնիկական ջրի խնդիրը: Նորից եմ ուզում կրկնել՝ կոմբինատի կարիքների համար ջուր է մղվում Արաքսից: Դա արվում է 1957 թվականից եւ նախատեսված ծրագրով, կոմբինատի էներգատրտադրամասի որոշ մասնագետներ թույլտվություն ունեն լինել սահմանափակ գոտում: Ըստ իս Չեր նշած նամակում կոմբինատին վերաբերող հարցը միանգամայն ավելորդ է:

– Ձեռնարկության վերակառուցումից հետո նոր աշխատատեղեր կբացվե՞ն, կբարձրանա՞ աշխատավարձը:

– Այժմ էլ աշխատողների թիվն 30-ով ավելացել է՝ հասնելով 930-ի: Կյանքն է ստիպում անընդհատ մտածելու մարդկանց աշխատանքով ապահովելու մասին: Բնականաբար, եթե արտադրությունն ընդլայնվում է, աշխատատեղերն էլ կարող են ավելանալ:

– Մենք, լինելով Ագարակում, մի քանի անգամ նկատել ենք, թե ինչպես տեխնոստիկ վթարների հետևանքով թափոնաջրերը խառնվել են Կարճեան գետին, որն ի վերջոթափվում է Արաքս գետը:

– Մեզ համար դժվար է որոշել ում

արտանետումներն են դրանք: Բանն այն է, որ Կարճեանը լեռնային գետակ է եւ հոսում է լեռնահանքային ծննդավայրով եւ ի սկզբանե իր մեջ պարունակում է այդ մետաղական տարրերը: Ես ուզում եմ ներկայացնել այդ արտանետումների որոշման մեթոդաբանությունը: Դա արվում է երեք տեղում. առաջին նմուշը վերցվում է արտանետումից 100մ վերելու, դա արվում է բնական ֆոնը որոշելու համար, այնուհետեւ նմուշ վերցվում է արտանետումի տեղում, այնուհետեւ 100մ արտանետումից ներքեւ, որպեսզի ճշտվի, թե շրջակա միջավայրի վրա այդ արտանետումն ինչ ազդեցություն ունի: Այս ամենը մեզ մոտ կիրառվում է, եւ գործնականում ոչ մի խախտում չկա: Մեր ձեռնարկության թափոնները տոքսիկական չեն, արտադրության մեջ չեն օգտագործվում ցիան եւ այլ նյութեր: Ես կարողացել եմ մեղրեցիների նախկինը, ըստ որի «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ ընկերության գործունեության հետեւանքով գրեթե 15 անգամ ավելացել է տարածքի ռադիացիոն ֆոնը: Երկրորդն էր դա ինձ համար անակնկալ էր, եւ ես սարք եմ ձեռք բերել ու միշտ ստուգում եմ ռադիացիայի ֆոնը: Եթե այստեղ ճառագայթման ֆոնն այդքան անմխիթար լիներ, իմ ընտանիքը՝ երեխաներով հանդերձ չէի տեղափոխի այստեղ: Հետաքրքրական կլիներ, այդ դիմումը ստորագրողներից մեկին հարցնել, եթե ասում ես 15 անգամ ավելացել է ռադիացիոն ֆոնը, գոնե գիտե՞ս դրա չափման միավորը, ինչով է չափվում տարածքի ճառագայթահարումը, կյուրի՞ով, զենտայո՞վ, էլեկտրոն-վոլտո՞վ: Մեր ձեռնարկությունը թունավոր արտանետում չունի: Իսկ ինչ վերաբերում է բնապահպանական խնդիրներին, մեծ գումարներ ենք ծախսում՝ մոտ հինգ միլիոն դոլար, պոչամբարում շրջանառու ջրամատակարարման համակարգ ստեղծելու համար, ինչի շնորհիվ Արաքս գետը մի կաթիլ ջուր չի թափվի: Այդ հիմնախնդիրն վերջ-



Գրող Արմեն Մանուկյան

Ֆաբրիկայում կատարվող աշխատանքների մասին մեզ հավելյալ տեղեկություններ հաղորդեց ձեռնարկության գլխավոր ճարտարագետ Արտակ Դոնյանը: Նա մասնավորապես ասաց.

«2010-ին սկսվեցին «Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության հարսպագուցիչ ֆաբրիկայի արտադրական կարողությունների հզորացման եւ արդիականացման աշխատանքները: Ֆաբրիկայի վերակառուցման նպատակը նախագծային հզորության 20 րոկոտով ավելացումն է: Բացի այդ կառուցվել են նուսական եւ այլ երկրների արտադրության ֆլուրամեններ: Նախկինները տեղադրվել էին 1968 թվականին, որոնք ֆիզիկապես եւ բարոյապես մաշված էին: Փեղծվարի կեսին հոսքագծերը կմիացվեն գործող համակարգին, որից հետո հին մասնաշենքում կսկսվի սարքավորումների ապամոնտաժումը եւ այդպիսի կառուցվել են նոր սարքավորումներ: Այս ամենի շնորհիվ կաճի հանքաքարից մեղրեցի կորզման աստիճանը: Միայն հարսպագուցիչ ֆաբրիկայում աշխատատեղերի թիվը կավելանա 20-ով»:

նականապես լուծում կստանա այս տարում:

– Այս ամռանը մենք այցելեցինք Կուրիս եւ Գուղեմնիս գյուղեր, որոնք այստեղից մոտիկ են, ճանապարհին ուղեփակող էր դրված, հետաքրքրական է, այդպիսի անհրաժեշտություն կա՞:

– Նախ՝ եկեք փաստենք մի պարզ ճշմարտություն. բոլոր բնակավայրերն ունեն ընդհանուր նշանակության ճանապարհներ, մեր շրջապատի գյուղերն էլ ունեն համայնքային ճանապարհներ՝ առանց ուղեփակոցի: Մեղրուց դեպի Կուրիս, Լեհվազի կողմից ասֆալտապատ, բարեկարգ ճանապարհ է ձգվում: Իսկ Կարճեանից Կուրիս ճանապարհահատվածն

անցնում է բաց հանքի տարածքով, որտեղ ամեն օր պայթեցումներ են լինում: Ինձ համար շատ տարօրինակ էր, երբ առաջին անգամ տեսա, թե ինչպես մասնավոր մեքենաները մուտք են գործում բաց հանքի տարածք: Դա հնարավոր է միայն Ագարակի կոմբինատում: Ոչ մի տեղ՝ Իրանում, Չիլիում, Ռուսաստանում, ոչ մի, ոչ մի տեղ մասնավոր մեքենաներին թույլ չեն տա մտնել բաց հանքի տարածք: Անհրաժեշտ է հատուկ թույլտվություն, հատուկ մեքենաների ուղեկցությամբ պիտի երթեկոթորեն իրականացվի: Բաց հանքում, որտեղ պարբերաբար պայթեցումներ են կատարվում, մասնավոր մեքենաների մուտքը հակացուցված է: Ես կասեմ, թե ինչու են այդ մեքենաները երթեկոթորեն հանքի տարածքով, ավելի արագ կարելի է հասնել ձեր նշած գյուղերը: Բայց այդ դեպքում, ո՞վ պիտի ապահովի դրանց անվտանգությունը:

– Կոմբինատի եւ Ագարակի ճակատագրերը միահյուսված են, քաղաքը ձեւավորվել է կոմբինատի շուրջը, այսօր էլ իր նպաստն է բերում քաղաքի առջեւ ծառայած հիմնախնդիրների լուծմանը: Ի՞նչ ծրագրեր են նախատեսված այս տարում:

– Երկրորդ ասած՝ ավելի նպատակահարմար էր այդ հարցն ուղղել Ագարակի քաղաքապետին, բայց քանի որ հարցը հնչեցրիք, մենք մշակել ենք սոցիալական պլան, որը հետետողականորեն իրականացնում ենք: Ագարակում իրականացվող ծրագրերի համար ամեն տարի փոխանցում ենք 300 հազար դոլար, բացի դրանից՝ մարդիկ մեզ գրավոր դիմում են օգնության խնդրանքով, մենք նրանց հնարավորինս օգնում ենք: Կներեք, սա շատ նրբին հարց է:

– Եւ ավանդական հարցը, որո՞նք են այս տարվա հիմնական պլանները:

– Այս տարի վճռորոշ կլինի մեզ համար, նախ, ինչպես մշեցի, նախատեսվում է արդիականացված հարստացուցիչ ֆաբրիկայի գործարկումը, ձեռնարկության պոչամբարում կավարտենք նոր համակարգի ներդրումը, որով նաեւ բնապահպանական կարելու խնդիր կլուծվի: Կառավարության հատկացրած վարկի մարման ծանրաբեռնվածությունը եւս այս տարվա վրա է ընկած: Կարծում եմ՝ կկարողանանք ծրագիրն իրականացնել, մասնավորապես կլուծվեն էլ դրան է տրամադրված:

– Թվում է՝ հարցերը սպառվեցին, բայց կա մի նրբին հարց, թեպետ Չեր մասին դրական կարծիք է ձեւավորվել, չար լեզուներն ասում են, որ Ագարակում պայթյուն կա ձեռնարկության տնօրենի աթոռի համար:

– Ինձ ձանձրացրել են այդ խոսակցությունները, տարվա մեջ երեք ամիսը մեկ ինձ աշխատանքից հանում են: Չեմ ուզում մեկնաբանել այդ մտացածին լուրերը, եթե ցանկանան ինձ հանել աշխատանքից, կասեմ՝ տղաներ, ինձ մնաց երեք ամիս...:

– Գիտեք ի՞նչ, Չեզ ոչ այնքան աշխատանքից ազատելու, այլ այն բանի մասին են խոսում, որ այսինչ-այսինչը պայքարում է ձեռնարկության տնօրենի աթոռի համար:

– Որպեսզի բոլոր խոսակցություններին վերջ տրվի, ասեմ, որ ես երեք տարվա պայմանագիր ունեմ, մինչեւ տարեվերջ ղեկավարելու եմ ձեռնարկությունը, իսկ հետո պարզ կլինի ինչն ինչոց է:

Ջրույցը՝ ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Մեղրին 2013թ. երկրորդ կեսին կունենա նորակառույց հիվանդանոց

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ



Լուսավորող՝ Զ. ԳՆԱՐՔՆԻՍՅԱՆ

ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի «ՀՀ մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» №1911-Ն որոշման համաձայն Մեղրու բժշկական կենտրոնն ու Ազարակի հիվանդանոցը 2010թ. օգոստոսի 10-ին միավորվեցին՝ ստեղծելով «Մեղրու տարածաշրջանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերություն: Մեղրու տարածաշրջանի բժշկական կենտրոնը ստանալու համար դիմեցինք «Մեղրու տարածաշրջանի բժշկական կենտրոն» ՓԲ-ի տնօրեն Ծաղիկ Վարդանյանին, ով մասնավորապես ասաց. «Երկու հիվանդանոցի միավորումը, անշուշտ, դրական արդյունք տվեց: Միայն թերապևտիկ ծառայություններ երկուսից երեք անգամ ավելացել է հիվանդների թիվը: Եվ դա այն պարագայում, երբ գործում է համավճարի սկզբունքը: Թվում էր, թե համախորհրդների քանակը պետք է դեպի նվազում գնար, բայց հակառակ արդյունքում է գրանցվել մեկ տարվա ընթացքում»: Տնօրենը հավաստիացնում է նաև, որ համայնքների բնակիչները չեն ունեցել նույնիսկ գնալ-գալու հետ կապված խնդիրներ, քանզի շտապ օգնության ծառայությունն աշխատում է շուրջօրյա, որը լուծում է հիվանդների տեղափոխման հարցը: Այնուամենայնիվ, արձանագրված դրական արդյունքների հետ մեկտեղ հիվանդանոցն ունի բազում խնդիրներ, չլուծված հարցեր: Ծաղիկ Վարդանյանը հուսով է, որ դրանք կլուծվեն հիվանդանոցի

համար: Նոր հաստատությունը ստեղծելուց անցել է մոտ մեկ տարի, եւ շատերին է հետաքրքրում, թե արդյո՞ք հիվանդանոցային նոր միավորումը տվեց այն դրական արդյունքը, ինչն ակնկալում էր կառավարությունը: Հարցի պատասխանը ստանալու համար դիմեցինք «Մեղրու տարածաշրջանի բժշկական կենտրոն» ՓԲ-ի տնօրեն Ծաղիկ Վարդանյանին, ով մասնավորապես ասաց. «Երկու հիվանդանոցի միավորումը, անշուշտ, դրական արդյունք տվեց: Միայն թերապևտիկ ծառայություններ երկուսից երեք անգամ ավելացել է հիվանդների թիվը: Եվ դա այն պարագայում, երբ գործում է համավճարի սկզբունքը: Թվում էր, թե համախորհրդների քանակը պետք է դեպի նվազում գնար, բայց հակառակ արդյունքում է գրանցվել մեկ տարվա ընթացքում»: Տնօրենը հավաստիացնում է նաև, որ համայնքների բնակիչները չեն ունեցել նույնիսկ գնալ-գալու հետ կապված խնդիրներ, քանզի շտապ օգնության ծառայությունն աշխատում է շուրջօրյա, որը լուծում է հիվանդների տեղափոխման հարցը: Այնուամենայնիվ, արձանագրված դրական արդյունքների հետ մեկտեղ հիվանդանոցն ունի բազում խնդիրներ, չլուծված հարցեր: Ծաղիկ Վարդանյանը հուսով է, որ դրանք կլուծվեն հիվանդանոցի

նոր շենք ունենալու դեպքում: Դեռես մեկուկես տարի առաջ որոշում էր ընդունվել Մեղրի եւ Ազարակ քաղաքների միջակա տարածքում ժամանակակից հիվանդանոց կառուցելու մասին, որտեղ կենտրոնացած կլինեն մասնագիտացված բժշկական օգնության բոլոր ծառայությունները: Հիվանդանոցը կառուցելու համար Մեղրու համայնքապետարանը հատկացրել է 1 հեկտար հողատարածք: Ֆինանսավորումը կատարվելու է Համաշխարհային բանկի կողմից: Իսկ թե ինչու մինչեւ հիմա ոչ մի աշխատանք չի տարվում, Ծաղիկ Վարդանյանը նշում է. «Իմ ունեցած տվյալների համաձայն՝ հատկացված տարածքը բավարար չէ, եւ պետք է եւս մեկ հեկտար հողատարածք, որպեսզի սկսեն աշխատանքները: Համաշխարհային բանկի Կովկասյան թեկի ղեկավարն իր վերջին այցի ժամանակ նշել է, որ մինչեւ ղեկտեմբեր (նկատի ունի 2011թ. դեկտեմբերը) այդ բոլոր խնդիրների լուծում կտրվի, եւ փետրվարից կսկսվեն շինարարական աշխատանքները: Եվ, ինչպես մեզ հավաստացնում են, հիվանդանոցը շահագործման կհանձնվի 2013թ. երկրորդ կեսին»: Հուսանք, որ 2013թ. Մեղրին կունենա նորակառույց հիվանդանոց՝ համարված կաղերքով ու ժամանակակից սարքավորումներով:

Նշենք նաև, որ «Մեղրու տարածաշրջանի բժշկական կենտրոն» ՓԲ-ի տնօրեն Ծաղիկ Վարդանյանը Հայաստանի համապետական կուսակցության Ազարակի կառույցի ղեկավարն է: Եվ, ըստ շրջանառվող խոսակցությունների, մարզի լավագույն բժշկուհիներից մեկի համբավ ունեցող անձնավորությունն առաջին խորհրդարանական ընտրություններում կարող է տեղափոխվել քաղաքական դաշտ: Թե ինչքանով են հավաստի այդ լուրերը, Ծաղիկ Վարդանյանն ասաց. «Բոլորս էլ լավ գիտենք, որ համամասնական ընտրությունների ցուցակը պատրաստ կլինի հունվարի վերջին կամ փետրվարի սկզբին: Եթե իմ կուսակցությունը որոշի, որ ես նույնպես պետք է ընդգրկվեմ ընտրական ցուցակում, ապա պատրաստ եմ կատարելու պատգամավորի պարտականությունը եւ արդարացնելու կուսակցության, ինչպես եւ ընտրողների վստահությունը: Դրանից, հավատացնում եմ, չի տուժելու Մեղրու առողջապահական համակարգը: Տարիների իմ փորձը կծոնեմ այսուհետ եւս ծառայեցնել ոչ միայն Մեղրուն, այլեւ մեր համակարգին ընդհանրապես: Կարծում եմ, որ յուրաքանչյուր ոք որեւէ կոնկրետ վայրում ունի աշխատելու իր ժամանակը, եւ ինքն ավելի շուտ է հասկանում, թե որտեղ կարող է առավել օգտակար լինել իր ժողովրդին: Ինչ վերաբերում է իմ համամասնական ցուցակով պատգամավորի թեկնածու առաջադրվելուն, մինչեւ հիմա առաջարկ չեմ ստացել, ընդամենը խոսակցություններ են»:

Շնորհավորանք Վահրամ Օրբեյանին

ՀՈՒՐԵԼՅԱՆ



Մարդու կյանքը նման է մշտապես գետի, որն անընդհատ հոսում է դեպի առաջ՝ այդ ճանապարհին հարթահարելով բազմաթիվ խոչընդոտներ, բախվելով քարերի ու ապարածների: Բայց գալիս է մի պահ, երբ ստիպված է լինում կանգ առնել ու... հեռավոր հայացք նետել անցյալին: Հունվարի 27-ին լրացավ «Սյունյաց երկիր» մարզային թերթի լրագրող, շատերի կողմից ճանաչված Վահրամ Օրբեյանի 55-ամյակը: Հեշտ չէ լրագրողական գործունեություն ծավալել մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ խոսքը կառուցելիս «Տասը անգամ չափիր, մեկ անգամ կտրիր» ասացված ժողովրդական արեւմտաօրինակը: Բայց անգամ այսպիսի ժամանակներում նա կարողանում է ինքնուրույն խոսք ասել՝ առանձնանալով շատ-շատերից իր գրագիտությամբ, մատչելիությամբ եւ ինքնատիպությամբ:

Անախադեպ մաքսանենգություն. ավելի քան 11 կիլոգրամ թմրանյութ են գտել իրանցու ճամպրուկում

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԱՍՏՄԱՆ

Պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցները տարեվերջին թմրանյութի ապօրինի ներկրման խոշոր դեպք են բացահայտել Մեղրիի մաքսակետում, որն, ըստ նախաբացթողումային հսկողության վարչության պետ Վահրամ Օրբեյանի, աննախադեպ է մաքսային ծառայության ամբողջ պրակտիկայի ընթացքում: 2011թ. դեկտեմբերի 29-ին, գիշերը 2-ի սահմաններում Մեղրիի մաքսակետում նախաբացթողումային հսկողության վարչության աշխատակիցները զննման են ենթարկել Իրանի քաղաքացի Սաիդ Միլանին պատկանող ուղեբեռը, արդյունքում ճամպրուկի թաքստոցից հայտնաբերվել է 11 կիլոգրամ 200 գրամ թմրանյութ, – ասել է նա:

ՊԵԿ-ի մամուլի ծառայությունից NEWS.am-ին հայտնում են, որ դեպքի առթիվ ՊԵԿ քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ եւ Սաիդ Միլանին կատմամբ որպես խափանում միջոց է կիրառվել կալանավորումը: Վահրամ Օրբեյանի խոսքով, Միլանին նախապես թմրանյութը փաթեթավորել էր հատուկ արտատպող թղթերի մեջ՝ նտաձելով, որ կարող է խուսափել Ռապիսկանե զննող սարքով բացահայտվելուց, սակայն թմրանյութը հաջողվել է հայտնաբերել վարչության աշխատակիցների հնտության եւ փորձառության շնորհիվ: Այս քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

Ի դեպ, առանձնակի խոշոր 3 դեպքերով նույնպես ապօրինի ներկրման փորձը կատարել են Իրանի 3 քաղաքացի՝ տեղափոխվելով թմրանյութ եւ հոգեմետ դեղորայք: Նախաբացթողումային հսկողության վարչության աշխատակիցները նաև ծանրոցների միջոցով թմրանյութի եւ հոգեմետ դեղերի ներկրման 2 փորձ են կանխել, ինչը փաստում է, որ այդ ուղին եւս գտնվում է մաքսային խիստ հսկողության ներքո: Նախաբացթողումային հսկողության վարչության պետ Վահրամ Օրբեյանի հավաստմամբ, թմրանյութ տեղափոխող մաքսանենգները դիմում են տարբեր մեթոդների՝ օգտա-

գործելով զանազան թաքստոցներ, անգամ սեփական մարմնը: Մեր պրակտիկայում մարմնի մեջ թմրանյութի տեղափոխման բազմաթիվ դեպքեր են բացահայտել ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց մոտ: Նշենք, որ 2011թ. ընթացքում նախաբացթողումային հսկողության վարչությունը մաքսային կանոնների խախտման շուրջ 500 դեպք է բացահայտել: 21 դեպքով հայտնաբերվել է բեռի թերի հայտարարագրում, 28 դեպքով էլ մաքսային ապահովման միջոցների բացակայություն կամ խախտում, իսկ 38 դեպքով արձանագրվել է քաշի, քանակի, ապրանքատեսակի եւ ծագման երկրի սխալ հայտարարագրում: Հայտնաբերվել է նաև մաքսային հսկողության համար սահմանված ժամկետի խախտման 413 դեպք: news.am, 23 հունվարի 2012թ.

Պահանջ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՄԲՈՆ

Հարգելի պարոն Սարգսյան ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի թիվ 627-Ն որոշումը 2011 թվականի աշնանից ՀՀ Սյունիքի մարզպետը փորձել է կյանքի կոչել, սակայն դա չի հաջողվել, քանզի որ հողերի սեփականատերերը եւ լայն հասարակայնությունը կտրականապես դեմ են եղել ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի թիվ 627-Ն որոշմամբ նախատեսված ծրագրին: Քաջարան համայնքի ղեկավարի բողոքի հիման վրա ՀՀ Աժ

«Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Ջարուհի Փոստանյանը խնդրի վերաբերյալ հարողում էր ներկայացրել Ձեզ, որի արդյունքում ՀՀ կառավարության կողմից ստեղծված աշխատանքային խումբը 2011թ. դեկտեմբերի 16-ին այցելել էր Քաջարան եւ տեղում անցկացրել միստ-քննարկում: Քաջարան գյուղ կատարած այցի արդյունքում, համաձայն արձանագրության, որոշում է ընդունվել՝ առաջարկել «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը՝ ուսումնասիրել արդյունահանման այլընտրանքային ուղիներ:

«Ժառանգություն» կուսակցության վարչությունը 2011թ. դեկտեմբերի 22-ին հանդես էր եկել հայտարարությամբ, որով պահանջում էր անհապաղ անվավեր ճանաչել ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի թիվ 627-Ն որոշումը՝ սահմանափակելով Քաջարան եւ Հայաստան-Իրան միջպետական ճանապարհի շրջակա գյուղերի՝ Արծվանիկի, Սեւաբարի, Աճանանի, Չափնի, Սյունիքի հողերի նպատակային նշանակությունը փոխելու եւ օտարման վերաբերյալ: «Ժառանգություն» կուսակցու-

թյունը դեկտեմբերի 18-ին եւ 24-ին կազմակերպել էր աշխատանքային մայր Սյունիքի մարզ՝ սատարելու մարզի բնակիչների պայքարին՝ ընդդեմ ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի թիվ 627-Ն որոշման: 2011 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ կառավարության շենքի առջեւ լայն հասարակայնության եւ Քաջարան համայնքի ղեկավարի մասնակցությամբ տեղի էր ունեցել բողոքի ակցիա, որի մասնակիցների պահանջն էր անվավեր ճանաչել ՀՀ կառավարության Շարունակությունը՝ էջ 14

Վահրամ Օրբեյանը ծնվել է 1957թ. հունվարի 27-ին Կապանում: 1963-64 ուստարում ընդունվել է 1973-74 ուստարում ավարտել է Կապանի №2 միջնակարգ դպրոցը: 1975-77թթ. ծառայել է խորհրդային բանակում: Ջորաջրվելուց հետո՝ 1977թ., ընդունվել է Երեւանի պետական-սարանի բանասիրական ֆակուլտետի նախապատրաստական բաժանմունքը: 1978-83թթ. ուսանել է բանասիրական ֆակուլտետում, որն ավարտել է գերազանցությամբ՝ աշակերտելով այն ժամանակվա նշանավոր լեզվաբաններին եւ գրականագետներին: Երկրորդ կուրսից անվանական թոշակ է ստացել՝ Պարույր Սեւակի անվան: 1984-85թթ. աշխատել է հանրապետության կառավարության առընթեր գլխավոր արխիվային վարչությունում: Հայրենի հողի կանչով 1985թ. տեղափոխվել է Կապան՝ աշխատանքի ընդունվելով «Ղափան» շրջանային թերթում՝ որպես գրական աշխատող, այնուհետեւ՝ բաժնի վարիչ: Մարզային կառույցները ստեղծվելուց հետո՝ 1996թ., աշխատանքի է անցել «Սյունիք» մարզային թերթում՝ որպես պատասխանատու քարտուղար՝ գործունեությունը շարունակելով մինչեւ 2000թ.: Այնուհետեւ շարունակել է լրագրողական աշխատանքը «Սյունյաց աշխարհ», 2003 թվականից «Սյունյաց երկիր» թերթում: Բանասիրական կրթության շնորհիվ ջանում է, որ թերթի էջերում գրական խոսակցություններ տեղ չունենան: Տնտեսական, ֆինանսական, առօրյա, մարզական լուրեր, ինչպես նաև շնորհավորանքներ, նույնիսկ մահախոսականներ գրելիս լրագրող պետք է կարողանա կարճ ու բովանդակալից ներկայացնել իր ասելիքը՝ լակոնիզմը դարձնելով իր նշանաբանը: Իսկ Վահրամ Օրբեյանի հողվածներն ունեն այդ միտումը: Իր աշխատասիրությամբ, գիտելիքներով, մարդկային արժանիքներով նա կարողացել է արժանանալ շատերի համակրանքին ու հարգանքին: Եվ այժմ, երբ փորձում ենք գետն իր հոսանքին հակառակ պատկերացնել, ապա տեսնում ենք մի նմաստալից եւ համեստ ապրված կյանք: «Սյունյաց երկիր» թերթի խմբագրականը շնորհավորում է Վահրամ Օրբեյանին՝ 55-ամյակի կապակցությամբ, մաթթում նրան առողջություն, երջանկություն ու նորամոր ձեռքբերումներ: ԱՄՐԻՆԵ ՀԱՐԻԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՒՄՈՐԱԿԱՆ

140 տարի առաջ Արծվանիկում հիմնադրվեց դպրոց, որի առաջին զանգը հնչեցնելու պատիվը շնորհվեց մեծ վիպասան Րաֆֆուն

Երիցվանիկը (Արծվանիկ) հնում մտնում էր Մեծ Հայքի Այունյաց աշխարհի Բաղք կամ Քաշունիք գավառի մեջ՝ Կապան քաղաքից 10 կմ հյուսիս-արևելք: Արծվանիկի ծննդյան վկայականը լրացվել է 1500 տարի առաջ:

Աշխատասեր, ռազմիկ, արհեստավոր, ուսումնասեր մարդիկ են ապրել այստեղ եւ արդար վաստակով ստեղծել իրենց կենսագրությունը, բայց եկել են պարսիկները, թուրքերն են եկել, ավերել կերտած տաճարներն ու հուշարձանները, սրի քաշել անմեղ ժողովրդին, հրդեհել տունը, արտն ու կալը:

Երիցվանիկը հարուստ ավանդույթներով գյուղ էր ու լայն ճանաչում ուներ պատմական տարբեր ժամանակներում: Գյուղում եղել են Դավիթ-Քեյրը, Մխիթար սպարապետը, Րաֆֆին, Մուրացանը, Անդրանիկը, Գարեգին Նժդեհը, Ալեսել Բակունցը, Սերո Խանգաղյանը, Արամ Խաչատրյանը, Ալիխանյան եղբայրները եւ այլք: Ուսուցիչ, գիմնական, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հարությունյանի հայրենի գյուղն է Արծվանիկը:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած, ինչպես Հայաստանի շատ գավառներում, այնպես էլ Կապանի տարածքում, բացվել են ծխական մեկրայան, երկրայան տիպի դպրոցներ: Այդպիսի դպրոց է բացվել նաեւ Արծվանիկ գյուղում: Բայց մինչեւ դպրոց բացվելը, 1855-ին կառուցվել է եկեղեցի՝ առ այսօր կանգուն, որին կից գործել է հին տիպի նախակրթական դպրոց, որտեղ սակավաթիվ երեխաներին սովորեցնում էին գրել, կարդալ եւ թվաբանական պարզագույն հաշվումներ կատարել չորս գործողությամբ: Բայց այդպիսի դպրոցը չէր կարող բավարարել ուսումնասեր արծվանիկցիների պահանջները, եւ բնակչության պահանջով 1872թ. Եջմիածնի հոգեւոր վարչության թույլտվությամբ Արծվանիկում բացվում է երկրայան ծխական դպրոց: Այդ է վկայում Հայաստանի ազգային արխիվի Եջմիածնի հայոց լուսավորչական եկեղեցու հոգեւոր սինոդի ֆունդուս պահվող, 1872թ. հունվարի 31-ին կազմված եկեղեցական ծխական դպրոցների ցուցակների արձանագրությունը, որում նշված է. «Ձանգեզուր գավառի Տաթևի հոգեւոր ուսումնական վարչության ենթակայությունում գտնվող Երիցվանիկ գյուղի եկեղեցուն կից գործել է եկեղեցական ծխական տարրական արական դպրոց՝ 18 աշակերտով եւ մեկ ուսուցչով»:

1872թ. հունվարի 31-ը դարձավ դպրոցի հիմնադրման տարեթիվը (Հայաստանի ազգային արխիվի ֆոնդ 56 ու, 93, գ 46, ք. 13):

Սկզբնական շրջանում դասավանդումը կատարվում էր հոջա Արզումանի տանը՝ երկրորդ հարկի մեծ սենյակում, որի առաջին ուսուցիչն էր Տաթևի հոգեւոր ուսումնարանի, ապա Թբիլիսիի Ներսիսյան դպրոցի առաջին շրջանավարտ, 27 տարեկան Մեսրոպ քահանա Տեր-Հարությունյանը, ով միաժամանակ գյուղի քահանան էր, իսկ որպես ռուսաց լեզվի ուսուցիչ՝ Ղարաբաղից եկած Բախչի անունով մի երիտա-



Կարո Անդրեասյան
Դպրոցի ներկայիս տնօրենը



Դպրոցի ներկայիս շենքը



Դպրոցի հին շենքը՝ կառուցված 1933թ.

սարդ, որն աշխատել է 18 տարուց ավելի եւ մեծ ներդրում ունեցել արծվանիկցի երիտասարդներին կրթելու եւ դաստիարակելու գործում, ինչպես նաեւ դպրոցաշինության ասպարեզում:

Դպրոցը 1873-1875թթ. ունեցել է մեկ ուսուցիչ եւ 18 աշակերտ, 1876թ.՝ 30 աշակերտ:

Այնուհետեւ՝ գյուղի դպրոցի հիմնադրման մասին պահպանվել է Եջմիածնի սինոդի անդամ եւ Տաթևի վանքի կալվածքների հավատարմատար Մեսրոպ Եպիսկոպոս Սմբատյանի 1878թ. նոյեմբերի 17-ին Գեւորգ կաթողիկոսին ուղղված զեկուցագիրը, ուր, ի շարս այլ տեղեկությունների, գրված է, որ Դավանի հաշտարար դատավոր եւ փորձառու փաստաբան Մովսես Բեկ-Բեկզարյանը, ով բնակվում է Երիցվանիկում եւ այստեղ է գործում դատարանն ու նրա գրասենյակը. «Ուր բնակարանն է Մովսես Բեկի եւ հաշտարար դատարանն է ու նաեւ այլ գրագրանոցքը մյուս եւս աստիճանավորանց տեղության, որ ի կողմանս Դավանու, նա եկեղեցական հոգեւոր դպրոցի տեղվոյն Մովսես Բեկն պատրաստ գտավ եւ պատճառեղավ բացման»: Այստեղից պարզվում է, որ Մովսես Բեկ-Բեկզարյանն առաջինն էր, ով որոշակի գումար

նվիրաբերեց դպրոցաշինությանը եւ ապա հորդորեց թե՛ պաշտոնյաներին, թե՛ գյուղի ու շրջակա գյուղերի ազգաբնակչությանը՝ դպրոցի օգտին որոշակի գումար հատկացնելու (Ֆոնդ 56 ու-գ 932, ք. 26):

Այսպես՝ տեղական մարմինների միջնորդությամբ հավաքված միջոցների հաշվին, պարիսկային եղանակով, ենթաջրանի գյուղերի ազգաբնակչության մասնակցությամբ, 1878թ. սկսված դպրոցական շենքի կառուցման աշխատանքներն ավարտվում են 1881թ.:

1881-82 ուստարվա պարապմունքները սկսվեցին նորակառույց դպրոցական շենքում: Դպրոցի բացմանը ներկա էին գյուղի հասարակությունը, հարեւան գյուղերից եկած ներկայացուցիչներ, Տաթևի եկեղեցական միաբանության առաջնորդը: Գյուղում տիրում էր խանդավառության եւ տոնախմբության մթնոլորտ: Այդ նշանակալից օրվան ներկա էր հայ նշանավոր վիպասան Րաֆֆին, ով շրջագայությամբ մեջ էր Ձանգեզուրում՝ Դավիթ-Քեկի ազգային-ազատագրական պայքարն ուսումնասիրելու եւ գրի առնելու նպատակով:

Րաֆֆին ելույթ ունեցավ եւ շնորհակալության խոսք ասաց՝ նորակառույց դպրոցի առաջին զանգը հնչեցնելու պատիվն իրեն շնորհելու

համար: Ապա ընտրվեց տնօրենը՝ Մեսրոպ քահանա Տեր-Հարությունյանը, հոգաբարձուների կազմը՝ երեք անձից, հաստատվեցին ուսուցիչները. «Եվս ընտրեցան վարժապետն եւ սենյակն վան դպրոցին» եւ հասարակությանը «ուխտիվք խոստացան յամենայն բանիվ եւ արդյամբ, պաշտպան հանդիսանալ նորաբաց դպրոցին՝ յօգուտ ազգի եւ եկեղեցու» (Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 429, ց 1, գ. 181, ք. 5եւ 8):

Ըստ Մեսրոպ քահանա Տեր-Հարությունյանի հիշողությունների՝ նորակառույց դպրոցը բաղկացած էր մեկ մեծ դասից՝ միջնասյունով, 127 ք/մ, որտեղ տեղավորված էին երեք շարքով նստարանները՝ երեք խմբի համար: Հայոց լեզու եւ կրոն առարկան դասավանդում էր Մեսրոպ քահանա Տեր-Հարությունյանը: Նա իր ողջ գիտակցական կյանքն անմնացորդ նվիրաբերել է Արծվանիկի եւ հարեւան գյուղերի աճող սերնդի կրթությանն ու դաստիարակությանը: Իր երկարամյա եւ լավագույն ու նվիրված աշխատանքի համար արժանացել է Գանձակի նահանգական լուսավորության վարչության խրախուսանքին եւ պարգևատրվել «խաչ» մեդալով:

1885թ. Երիցվանիկ գյուղում

գործել է հասարակական (պետական) դպրոցը, որը ենթարկվել է պետական ուսումնական վարչությանը: Դպրոցը ստուգման է ենթարկվել Ելիզավետպոլի նահանգի պետական դպրոցների տեսչի կողմից:

Հայտնի է, որ 1885թ. վերջերին տեղի ունեցավ հայ դպրոցների առաջին ընդհանուր փակումը ցարիզմի կողմից: Կարելի է կարծել, որ այդ հանգամանքից օգտվելով երիցվանիկ (Արծվանիկ) գյուղում բաց են արել հասարակական (զենսովոյական) դպրոց, որը նույնպես պահվել է տեղի բնակչության հաշվին, բայց ենթարկվել է պետական դպրոցական իշխանությանը (հայ դպրոցները ենթարկվում էին հայ հոգեւորականությանը):

1890թ. դպրոցի տնօրեն Բախչի վարժապետին փոխարինելու եկավ Շուշից գործուղված Եփրեմ Մելիք-Շահնազարյանը, ով պաշտոնավարել է մինչեւ 1901թ.: Ժամանակակիցները, ովքեր ուսուցանվել էին նրա ժամանակ, պատմել են, որ նա եղել է բարի, մարդասեր, ջբավորների ջերմ պաշտպան, հարգված եւ մեծ հեղինակություն վայելող անձնավորություն:

1895թ. դպրոցը դառնում է երկուստեղ տղաների եւ աղջիկների համատեղ ուսուցման, որտեղ դասավանդումը կազմակերպվել է նաեւ ռուսերեն, որտեղ սովորում էր 35-40 աշակերտ: Պարապմունքը միաժամ եր:

Եփրեմ Մելիք-Շահնազարյանն աշխատանքին զուգահեռ զբաղվել է ժողովրդական բանավոր ստեղծագործությունների հավաքմամբ: Նրա աշխատանքները զետեղված են ցարական Ռուսաստանի կովկասյան ուսումնական վարչության «Կովկասի վայրերի ու ազգությունների նկարագրության նյութերի ժողովածուի» ռուսերեն հատորներում: Նա առաջինն էր, ով 1900թ. Երիցվանիկ գյուղում կազմակերպել է թատերական ներկայացում, որին մասնակցել են ինչպես աշակերտներ, այնպես էլ՝ ծնողներ: Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմքում դրված էին պահանջկոտությունը եւ ծեծը:

1901-1906թթ. դպրոցի տնօրեն է աշխատել Վասիլի Կորխանզովը (Վաստ Կուրխանզյան), ով Թբիլիսիի հայերից էր: Նա խստապահանջ մարդ էր եւ պաշտոնավարելու ժամանակ աշակերտներից պահանջում էր, որ ոչ ոք չհամարձակվի առանց դասը սովորելու ներկայանալ դպրոց կամ բացակայել դասերից: Այդպիսիների համար անխուսափելի էին ծեծը եւ պատժի տարբեր ձևեր:

Ժամանակակիցներից Թ. Հարությունյանը, Մ. Գեւորգյանը եւ Խ. Հարությունյանը պատմում էին, որ Վաստ վարժապետը, առանց որեւէ լուրջ պատճառի, ծեծի էր ենթարկում Միքայել Մանուչարյանին: Միքայելը զայրանում է վարժապետի վրա եւ գնում, տնից վերցնում է որսորդական հրացանը, որպեսզի սպանի Վաստ վարժապետին: Միջամտել է գյուղի քոյիվան՝ Գրիգոր Հովհաննիսյանը: Միքայելը տեղի է տվել: Նա թողնում է դպրոցը եւ մեկնում Բաքու՝ աշխատելու:

Երիցվանիկում բացված եկեղեցական ծխական երկրայան դպրոցի առաջին շրջանավարտներից են Թեւան Տեր-Հարությունյանը, Բախչի Սարգսյանը, Գրիշա Հարությունյանը, Ավագ Սարգսյանը, Խաչատուր Տեր-Հարությունյանը (ի դեպ, նա հետագայում դարձել է կրոնական խոշոր գործիչ, եղել է Եջմիածնի միաբանության անդամ, իսկ 1950-ականներից աշխատել է Մոսկվայում՝ որպես արտասահմանից հայերի հայրենադարձության պատասխանատու աշխատող: Վախճանվել է 98 տարեկան

ՀՈՒՆՎԱՐ

հասակում):
1906թ. մինչև 1909թ. տնօրեն է աշխատել Թաղեուս Դազարյանը (Ղարաբաղի Տու-մի գյուղից), 1909-1912թթ.՝ Կոլյա Մելիք-Մուսայելյանը (Գորիսից), 1912-1915թթ.՝ Հովհաննես Հայրապետյանը (Խնձորեսկ գյուղից), 1916-1918թթ.՝ Արարատ Տեր-Հարությունյանը (Արծվանիկից), ով գերազանց գնահատականներով ավարտել է Եջմիածնի ճեմարանը, սկզբում աշխատել է Շրվեհանց գյուղում, ապա Արծվանիկում:

1911-12 ուստարում դպրոցում սովորում էր 80 աշակերտ՝ չորս ուսուցչով, նրանց թիվը տարեցտարի ավելանում էր: Ուսման մեջ ներգրավվում էին Արծվանիկի ենթաշրջանի գյուղերի ուսումնատեմից երեխաները:

Դպրոցի տնօրեն Հովհաննես Հայրապետյանի ղեկավարությամբ շարունակվում էր ուսումնական պրոցեսը: Ուսուցիչներն ապահովված էին անվճար բնակարանով, վառելափայտով ու նավթով: 1914-15 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 90 աշակերտ՝ 5 ուսուցչով: Ուսումնական մասնաձեռնությունները հաջորդում էին մեկը մյուսին: 1917թ. մեծ շուքով նշվել է դպրոցի 35-ամյակը: Կան տեղեկություններ այն մասին, որ նախախորհրդային շրջանում Արծվանիկի կրթօջախը ստանում էր մի քանի թերթ ու ամսագիր:

Քաղաքական անկայունության եւ դրա հետևանքով ստեղծված ծանր պայմանների (սով, տիֆ, համաճարակ) պատճառով 1918թ. շրջանի շատ դպրոցների հետ մեկտեղ փակվեց նաև Արծվանիկի դպրոցը:

«1920թ. սեպտեմբերի 30-ին, 11 տարի բացակայելուց հետո, հայրենի գյուղ հասա, — իր հուշերում պատմում է Հայկ Տեր-Հարությունյանը, — դպրոցը ավերված էր: Գյուղը թողել էի բանաստեղծության, երգի մեջ, գտա ողբի մեջ»:

Դպրոցը վերաբացվել է 1921թ.: 1922թ. ընդլայնվում է դպրոցի ցանցը, մտցվում են դասավանդման նոր ծրագրեր, նոր առարկաներ, նոր պահանջներ: 1921-22 ուստարում սովորում էր 95 աշակերտ: Դեկավարությունը հանձնվել է Շուշիի ռեակցիոն դպրոցի շրջանավարտ, Ղափանի հեղկոմի առաջին քարտուղար, արտակարգ գործերի կոմիսար Հայկ Հարությունյանին:

«Չնայած բոլորում է կյանքիս 100-ամյակը, — պատմում էր վերջերս վախճանված Աշոտ Հովհաննիսյանը, — սակայն, այսօր առանձնակի սիրով, ջերմությամբ եմ հիշում իմ դպրոցը, առաջին ուսուցիչս՝ Հայկ Տեր-Հարությունյանին, նա 1922թ. ինձ տարել է դպրոց, առաջին «Ա» տառը ոչ թե գրել, այլ ուղղակի նկարել գրատախտակին: Ուներ սլացիկ հասակ, հագնվում էր ճաշակով, միշտ սափրված, գանգուր մազերով, բազմակողմանի զարգացած, բարեկիրոս ու լայն մտահորիզոնի տեր մարդ էր, մարդամոտ, ուշադիր, կարեկցող»:

1920-30-ականներին Արծվանիկի դպրոցում աշխատել են ուսուցիչներ Սմբատ Հովհաննիսյանը, Սոնիկ Նավասարդյանը, Մուշեղ Անտոնյանը, Շուշիի ռեակցիոն դպրոցի շրջանավարտ Աշոտ Հակոբյանը (Նորաշենիկ գյուղից): 1930թ. առաջինն էր, ով պարզեատրվեց ՀԽՍՀ կենտրոնական նախագահության պատվոգրով:

Գյուղի տարրական (4-ամյա) դպրոցի միակ ուսուցչուհին Վարդանուշ Տեր-Հարությունյանն էր: Անձամբ ղեկավարում էր ինքնագործ խմբերը, որոնք ելույթներ էին ունենում ենթաշրջանի գյուղերում: Նա աշակերտների սիրելին էր:

1930թ. դպրոցը դառնում է յոթ-ամյա: Կրթօջախն ուներ 105 աշակերտ, 10 ուսուցիչ:

1931թ. երկրաշարժի հետևանքով փլվեց շենքը: Այդ ժամանակ որոշվեց դպրոցական պարապմունքներն անցկացնել 1912թ. կառուցված «զայեզժի-դոմ» կոչվող մեծ շենքում, որը ծառայել է նախեսառաջ որպես դպրոց, ապա՝ մանկապարտեզ, իսկ 1950-1954թթ. վերածվել է ենթաշրջանային հիվանդանոցի: Շենքը քանդվել է 1964թ. Կապան-Գորիս ճանապարհն ընդարձակելու ժամանակ: 1930-1932թթ. դպրոցի տնօրեն է աշխատել Շահեն Թորոսյանը (Ագարակ գյուղից): Նա լավագույն մանկավարժի համբավ էր ձեռք բերել, ուներ մանկավարժական պատշաճ տակտ, վայելում էր արծվանիկցիների սերն ու հարգանքը:

1933-34 ուսումնական տարում պարապմունքները սկսվել են նորակառույց դպրոցական շենքում (մեկ հարկանի, երեք դասասենյակ): Տնօրեն է նշանակվել Գորիսի մանկավարժական տեխնիկումի շրջանավարտ Աշոտ Հարությունյանը՝ Արծվանիկ գյուղից, հետագայում՝ գնդապետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Այդ շենքը որպես դպրոց ծառայել է մինչև 1970թ. եւ հետագայում տրամադրվել մանկապարտեզին, իսկ գյուղի հարավում գտնվող մասում կառուցվել է տիպային դպրոցական շենք՝ բոլոր հարմարություններով:

1934-35 ուստարում դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատել է Միսակ Կարապետյանը՝ Նորաշենիկից:

1935թ. շրջգործկոմի նախագահ Սանասար Ղալեյանն ընդունեց Արծվանիկի միջն. դպրոցի մի խումբ ուսման հարվածայիններին:

Դպրոցի 199 աշակերտների կողմից ընկեր Ղալեյանին գրած նամակն ընթերցեց հարվածային աշակերտուհի, պիոներ Աշխեն Բաբաջանյանը: Ընկեր Ղալեյանը հարցումներ արեց նրանց կյանքի, կենցաղի, ուսման որակի եւ կարգապահության մասին: Այդ տարի դպրոցի աշակերտները տնկել էին 1500 ծառ ու թուփ: Նախագահը խոստացավ 10 հարվածային աշակերտի գործկոմի միջոցներով էքսկուրսիա ուղարկել հեռավոր քաղաքներ եւ գործկոմի միջոցներից դպրոցին տալ 300 ռուբլի, լուսբաժնից՝ 1000 ռ.: 1937-38 ուսումնական տարում դպրոցը դառնում է միջնակարգ, որտեղ կրթություն էին ստանում նաև հարեւան գյուղերի աշակերտները: Նրանք բնակվում էին գյուղի մասնավոր տներում: Տնօրեն է նշանակվել Գարեգին Այվազյանը (Երեւանից): Դպրոցում սովորում էր 125 աշակերտ՝ 12 ուսուցչով: Հաջորդ ուստարում Այվազյանին փոխարինել է Արտաշես Առուստամյանը, ով աչքի է ընկել իր համեստությամբ եւ պատրաստվածությամբ: Կանոնավոր էր գործում Արծվանիկի մեծահասակային գիշերային դպրոցը: Այն ուներ երկու խումբ՝ անգրագետների եւ կիսագրագետների: Ակտիվ սովորողներից էին Արսեն Մանուչարյանը, Նուբար Ստեփանյանը, Օվաննա Սահակյանը եւ Ալյան Սարգսյանը: Դպրոցն իր առաջին շրջանավարտները տվել է 1940-41 ուսումնական տարում՝ թվով 11 հոգի:

1941-1945թթ. դպրոցը ղեկավարել են Սուրեն Խաչատրյանը, Գալուստ Չաթուրյանը, Մաքո Գուլեցյանը, Ցոլակ Նահապետյանը, Արշակ Ղահրամանյանը:

Պատերազմի ծանր տարիներին երեխաներին կրթել ու դաստիարակել են Մ. Գուլեցյանը, Ց. Նահապետյանը, Ա. Գրիգորյանը, Ա. Անդրեասյանը, Թ. Խաչատրյանը, Պ. Սարգսյանը, Թ. Հովակիմյանը, Հ. Ղազարյանը,

Ա. Մարտիրոսյանը, Զ. Ավետիսյանը, Մ. Շահնազարյանը, Ս. Հարությունյանը, որոնք փոխարինեցին զորակոչված ընկերներին:

1946-47 ուստարում դպրոցի տնօրեն է նշանակվել համագյուղացի Արսեն Մկրտչյանը: Ստանձնելով հայրենի կրթօջախի տնօրենի պաշտոնը՝ 36 տարի անընդմեջ նվիրվեց գյուղի լուսավորմանն ու բարգավաճմանը: Այդ տարիներին դպրոցական կյանքը սկսում է նորնալ հունի մեջ մտնել, դպրոցը համալրվում է նոր կադրերով, դպրոցի առջեւ դրված խնդիրները դառնում են հրատապ: Ինչպես պատերազմի ժամանակ, այնպես էլ հետպատերազմյան առաջին տարիներին ուսումնադաստիարակչական գործընթացը խիստ տուժել էր: Պակասել էր աշակերտների թիվը, որի հետևանքով դպրոցում սովորողները ավարտական քննությունները հանձնում էին Կապանի №1 միջնակարգ դպրոցում: 1949 թվականին դպրոցը տվեց հետպատերազմյան առաջին շրջանավարտները՝ թվով 7 հոգի:

1948-1960-ականներին դպրոցին կից կառուցել են լրացուցիչ դասասենյակներ եւ արհեստանոց, որի շինարարական աշխատանքներին մասնակցել են բարձր դասարանի աշակերտները, ուսուցիչները եւ ծնողները:

Դպրոցն անցավ մեկիերթյա պարապմունքի: Հարստացան լաբորատորիաները նոր սարքավորումներով եւ գործիքներով: 1960-ականների համար բնորոշ էին ուսման որակի եւ առաջադիմության բարձրացման լավագույն ցուցանիշները: Դրա վառ վկայությունն էր, որ բարձրագույն ուսումնական հաստատություն էին ընդունվել դպրոցի շնորհալի շրջանավարտները: Օրինակ՝ 1965-66 ուստարվա 14 շրջանավարտ ընդունվեց բուհ:

1970թ. կառուցվեց տիպային դպրոցական շենք՝ կից կառույցներով, ուսումնափորձնական հողամասով: Աճեցված բարձր բերքի համար մի խումբ աշակերտներ (ղեկավար՝ Հրանտ Հարությունյան) եղան Մոսկվայի համամիութենական գյուղատնտեսական նվաճումների ցուցահանդեսում: 1982 թվականից դպրոցի դիրեկտոր, ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ Արսեն Մկրտչյանին փոխարինել է 1960թ. մինչև 1982թ. դպրոցի ուսմասվար աշխատած եղվարդ Մանուչարյանը: 45 տարվա աշխատանքային գործունեությամբ նա ակտիվ մասնակցել է գյուղի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր միջոցառումներին, նպաստել գյուղապահպանման նվիրական գործին, ծավալուն աշխատանք տարել մատաղ սերնդի ուսուցման, աշխատանքային ու հայրենասիրական դաստիարակության գործերում: Այլընտրանքային կարգով 1988թ. դպրոցի տնօրեն է ընտրվել ստեղծագործող ուսուցիչ Կարո Անդրեասյանը: Նա շարունակել է ղեկավարել կրթադաստիարակչական հարուստ ավանդույթներ ունեցող կրթօջախի գործունեությունը:

Կապանի տարածաշրջանում առաջին գյուղն էր, որ ունեցավ համակարգային կենտրոն, որի տնօրեն Կ. Անդրեասյանի ջանքերով ստեղծվեց Արծվանիկ գյուղին եւ դպրոցին վերաբերող տեղեկությունների բանկ:

Համակարգային կենտրոնում կազմակերպվում են դասընթացներ համայնքի անդամների, ուսուցիչների եւ աշակերտների համար: Դպրոցն ունի կահավորված կաբինետներ, «Փառքի անկյուն»՝ նվիրված Արցախյան գոյամարտում զոհված համադրույցի վեց ազատամարտիկի հիշատակին:

Արծվանիկի միջնակարգ դպրոցն ամենաշատ աշակերտ ունեցել է



Մերսոպ քահանա Տեր-Հարությունյան: Դպրոցի տնօրենը 1872թ.:



Իրաֆֆի

1950թ.՝ 200, 1960թ.՝ 190, 1963-1965թթ.՝ 220-ից ավելի աշակերտ, իսկ դասերը՝ երկիերթ էին: Դրանից հետո աստիճանաբար սկսել է նվազել: Կրթօջախն այսօր ունի 65 աշակերտ, գործին նվիրյալ 18 ուսուցիչ, իսկ առաջին դասարանում սովորում է ընդամենը չորս աշակերտ:

Ինչպես տեսնում եք, դպրոցում տարեցտարի պակասում է աշակերտների թիվը:

Ի դեպ, 140 տարվա ընթացքում դպրոցը տվել է 1000-ից ավելի շրջանավարտ, որոնցից բարձրագույն կրթություն են ստացել 398-ը, միջնակարգ մասնագիտական՝ 100-ը: Ամեն տարի դպրոցի շրջանավարտների 30-40 տոկոսն ընդունվում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություն:

Կրթօջախի նախկին սաներից 8-ը քաղաքական գործիչ են, 11-ը՝ դասախոս, 12-ը՝ բժիշկ, 80-ը՝ մանկավարժ, 25-ը՝ ինժեներ են մեխանիկատոր, 2-ը՝ ճարտարապետ, 25-ից ավելին՝ գյուղատնտես, ագրոնոմ են անասնաբույժ: Այստեղ աշխատել են ճանաչման արժանացած հին, միջին եւ ներկա սերնդի մանկավարժներ Ռուբեն Շահնազարյանը, Արմենակ Եսայանը, Միշա Աբրահամյանը, Մարինա Կրիշաշուկինյան, Վլոդոյա Դավթյանը, Սիրուշ Բաղդասարյանը, Մարուսյա Մելքոնյանը, Ամալյա Մովսիսյանը, Արմին Զաքարյանը, Ժաննա Մարգարյանը, Գոհար Առաքելյանը, Սիլվա Բաղդասարյանը, Լյուբա Հարությունյանը, Յուրա Ավարդյա-

նը, Աստղիկ Դանիելյանը, Անահիտ Սահակյանը, Արմինե Անդրեասյանը, Ռոբերտ Հարությունյանը, Հասմիկ Անդրեասյանը, Նունե Գալստյանը, ուրիշներ:

Վերջին տարիներին ուսմասվարներ են եղել Ռուբեն Շահնազարյանը, Երուսրո Մանուչարյանը, Կարո Անդրեասյանը, Ազատուհի Զաքարյանը, Հրանտ Հարությունյանը, Գոհար Առաքելյանը:

Գրադարանավարներ են աշխատել Աշխեն Անդրեասյանը, Ռիտա Ավետիսյանը եւ Ռոզա Դավթյանը:

Դպրոցը տվել է 10 մեդալակիր:

Կրթօջախում են ուսում ստացել անվանի շատ մարդիկ, որոնցից են արդեն հիշատակված՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հարությունյանը, գիտությունների թեկնածուներ Գերասիմ եւ Ռաֆիկ Դավթյանները, Յուրա Գասպարյանը, Ալեքսանդր Դեւոնդ Զաքարյանները, լրագրող Միքայել Հակոբյանը, Մարիա Գասպարյանը, Ալեքսանդր Զաքարյանը, Բելլա Հարությունյանը, քաղաքական գործիչներ Միքայել Մանուչարյանը, Արարատ Տեր-Հարությունյանը եւ ուրիշներ:

Կրթօջախի տարեգրության մեջ արձանագրվել են լուրջ նվաճումներ ինչպես կրթադաստիարակչական, այնպես էլ դպրոցավարության օրինակելի փորձի ներդրման առումով, ինչն, անշուշտ, նաեւ 2011թ. «Վաստակավոր մանկավարժ» կոչմանն արժանացած Կարո Անդրեասյանի երախտիքն է, ով 23 տարի շարունակ ղեկավարում է կրթական այս օջախը (նա նույնպես այս դպրոցի սան է եղել):

— Կրթօջախն ունի նաև շատ խնդիրներ, — մասնավորապես ասաց Կարո Արդեասյանը, — «Վորլը վիժն» Կապանի տարածքային կենտրոնի հետ համագործակցելով՝ համայնքը վերանորոգել է դպրոցի մարզադահլիճի հանդերձարանը, սանհանգույցը, «Զինիշան» հիմնադրամի միջոցով՝ մարզադահլիճը, բայց երկար ժամանակ դպրոցը չի նորոգվել եւ դրա կարիքն ունի:

Այնուհետև հպարտությամբ շարունակեց. «Առաջիկայում դեռ շատ նախաձեռնություններ ու ծրագրեր կան իրականացնելու, որոնք էլ ավելի կնպաստեն կրթօջախի զարգացմանն ու բարգավաճմանը»:

ՀՐԱՆՏ ՍԱՅԱԿՅԱՆ
պատմության ուսուցիչ, դպրոցի շրջանավարտ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ. «Նոր փոփոխություններով բոլոր տնօրենները հայտնվեցին հավասար իրավական դաշտում»

ՀԱՆՐԱՎԿՐԹՈՒԹՅՈՒՆ

«Այունյաց երկիր» թերթի հարցերին պատասխանում է Այունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության կրթության բաժնի պետ Արսեն Գրիգորյանը: Արսեն Գրիգորյանի հետ հարցազրույցը դպրոցի տնօրենների ընտրությունների մասին է: Հարցերը վերաբերում են տնօրենների վերապատրաստման դասընթացներին, հավասարազորի ձեռքբերմանը, քանի որ այսօր դրանք հանրակրթական դպրոցներում դարձել են արդիական ու առաջնային:

— Պարոն Գրիգորյան, նախկինում մինչև կրթության ոլորտում բարեփոխումներ կատարելը, ի՞նչ սկզբունքներ գոյություն ունեին դպրոցի տնօրենի ընտրության հարցում:

— Նախկինում մինչև օրենքի փոփոխումը, դպրոցի տնօրեն նշանակում էր Այունիքի մարզպետը, եթե առաջանում էր թափուր տեղ: Այնուհետև եկավ այնպիսի պահ, երբ խնդիր առաջացավ, որ անորոշ ժամկետով պայմանագիր կնքած տնօրեններին տեղափոխեն իրավական այլ դաշտ եւ պայմանագիր կնքեն միայն նրանց հետ, ովքեր մրցույթով են ընտրվում:

— Ո՞վ իրավունք ունի, ըստ գործող օրենքի, հավակնել կամ պայքարել տնօրենի հավաստագրի համար:

— Հանրակրթական դպրոցի տնօրենի հավաստագիր ստանալու համար կարող է վերապատրաստվել այն անձը, ով ունի բարձրագույն կրթություն եւ վերջին 10 տարվա ընթացքում առնվազն 7 տարվա մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի ընդհանուր աշխատանքային ստաժ:

— Քանի՞ անգամ է մարզում կազմակերպվել տնօրենի հավաստագրի համար դասընթացներ եւ ե՞րբ է լինելու հերթական դասընթացը: Եղել է ղեկավար, երբ մարդիկ վերապատրաստմանը մասնակցելուց հետո, հավաստագիր չեն ստացել:

— Վերապատրաստման դասընթացները կազմակերպվել են երկու անգամ: Առաջինը 2010թ. դեկտեմբեր ամսին էր, երկրորդը՝ 2011թ. ապրիլին: Կազմակերպված դասընթացին մասնակցել են 85 գործող տնօրեն եւ ուսուցիչներ, ովքեր նույնպես հավակնում էին դպրոցի տնօրեն դառնալ:

Այդ գործընթացը շարունակական բնույթ է կրելու, եւ 2012թ. նախատեսվում է անցկացնել տնօրենների վերապատրաստման եւս երկու դասընթաց: Նշեն նաեւ, որ 2011-ին ինը տնօրեն չի մասնակցել վերապատրաստման դասընթացներին, իսկ հավաստագիր չեն ստացել Կապանի №12 դպրոցի եւ Շենաթաղի դպրոցի տնօրենները: Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար 2011թ. ցանկացողները վճարել են 84 հազար դրամ, իսկ 2012թ. վճարելու են 65 հազար դրամ:

— Ովքեր իրավունք ունեն անցկացնել վերապատրաստման դասընթացները:

— Վերապատրաստման դասընթացները հիմնականում իրականացնում են ՀՀ ԿԳ նախարարության



Մանուկյան Լ. Գրիգորյան Ա.

ԱՅՑԵՔԱՐՏ

Ծնվել է 1960թ. փետրվարի 4-ին Կապան քաղաքում: 1966թ. ընդունվել է Կապանի №1 միջնակարգ դպրոց: 1970թ. տեղափոխվել է №7 միջնակարգ դպրոց, որն ավարտել է 1976թ.: 1976թ. օգոստոսին աշխատանքի է անցել «Քաջարանչին» տրեստի № 65 շինվարչությունում՝ բանվոր: 1978թ. զորակոչվել է խորհրդային բանակ: Ավարտելով ծառայությունը՝ ընդունվել է Օդեսայի պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետը, իսկ 1984թ. փոխադրվել Երևանի պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետ եւ ավարտել 1986թ.: Նույն թվականին աշխատանքի է ընդունվել Կապանի №2 միջնակարգ դպրոցում՝ աշխարհագրության եւ աստղագիտության ուսուցիչ: 1991թ. նշանակվել է դպրոցի փոխտնօրեն: 1993թ. իր դիմումի համաձայն անցել է գինվորական ծառայության: Ջրաղեղրել է տարբեր գինվորական պաշտոններ, մասնակցել 1993-1994թթ. թեժ մարտերին, որտեղ էլ վիրավորվել է: 2001թ. նշանակվել է Այունիքի մարզպետարանի ճանապարհաշինության եւ տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ: 2004թ. թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթում հաղթել եւ նշանակվել է մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի վարչության գլխավոր մասնագետ: 2005թ. ընտրվել է Հայաստանի աշխարհագրական ընկերության մարզային բաժանմունքի նախագահ: 2006թ. թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթում հաղթել եւ նշանակվել է Այունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության կրթության բաժնի պետ: Պարգևատրվել է «Ծովակալ Իսակով» մեդալով: Ամուսնացած է, ունի երեք դուստր:

կրթության ազգային ինստիտուտի մասնագետները: 2011թ. վերապատրաստված տնօրեններից երկուսը, սահմանված կարգով քննություն հանձնելուց հետո, ստացան իրավունք՝ մարզում վերապատրաստման դասընթացներ անցկացնելու: — Հանրակրթական դպրոցներում անցկացվող ընտրության ժամանակ քանի՞ դպրոցում է եղել մեկ թեկնածու, քանիստ՝ մեկից ավելի: Արդյոք կան դպրոցներ, որտեղ ընտրվել են մոր տնօրեններ:

— Նախ նշեն, որ դպրոցներ կային, որտեղ մրցակցային դաշտը շատ ուժեղ է եղել, օրինակ՝ Իշխանասարի, Կապանի №7, №12, №13, Վարդանիձորի, Լորի, Շաղատի դպրոցներում: Դպրոցներ կային, որտեղ տնօրենի պաշտոնի համար պայքարում էր երկու եւ ավելի, նույնիսկ հինգ թեկնածու: Նոր տնօրեն է ընտրվել ինը դպրոցում: Դպրոցներ կային, որտեղ մեկ թեկնածու էր (80 դպրոց): Եթե դպրոցներում մրցույթի արդյունքով տնօրեն չի ընտրվում, ապա տնօրենի պաշտոնակատար է նշանակվում՝ մինչև նոր մրցույթի անցկացումը: Պաշտոնակատար աշխատելու դեպքում տնօրենի հավաստագիր ունենալը պարտադիր չէ: Միայն նրա 65 տարին լրացած չպիտի լինի:

— Տնօրենների ընտրության ժամանակ արձանագրվել են բողոքներ, արտառոց դեպքեր:

— Բողոքներ, կրիտիկական պա-

հեր, որպես այդպիսիք, չեն եղել, իսկ եթե եղել են, ապա դրանք հիմնականում առաջացել են չինացության, անտեղյակության պատճառով:

— Իսկ ինչպե՞ս պատահեց, որ Ապանդարյանի դպրոցում թեկնածուներից մեկն ընտրությունից մեկ օր առաջ հանեց իր թեկնածությունը, կամ ի՞նչ կատարվեց Շինուհայրի, Կապանի №13 դպրոցներում:

— Ես չեմ կարող ասել, թե ինչ կատարվեց Ապանդարյանի դպրոցում: Տնօրենի պաշտոնի համար պայքարող թեկնածուները մինչև վերջին պահն էլ իրավունք ունեն հանելու իրենց թեկնածությունը: Այդպես եղավ Գեղանուշի դպրոցում՝ 2011թ. հոկտեմբերի 11-ին, երբ հավակնորդներից մեկն ուղղակի չկամեցավ մասնակցել մրցույթին: Ինչ վերաբերում է Շինուհայրին, այնտեղ մրցույթ տեղի ունեցավ, որին մասնակցում էր նաեւ դպրոցի տեխնոլոգիայի ուսուցիչը, ում խորհրդի անդամները չընտրեցին, եւ արդյունքում ընտրվեց գործող տնօրենը:

Կապանի №13 դպրոցն էլ դեկավարում է տնօրենի պաշտոնակատարը՝ նախկին տնօրեն Դարիկո Ավագյանը: Ի դեպ, այդ դպրոցում հավակնորդներ եղել են, ի սկզբանե պայքարում էր վեց թեկնածու, որոնցից մրցույթի օրը մնացին երկուսը, արդյունքում ոչ մեկը հաղթող չճանաչվեց: Դպրոցի խորհուրդը հայտարարել է նոր մրցույթ մարտի 20-ին, որպեսզի այս դպրոցում եւս

ընտրվի տնօրեն:

— Ե՞րբ ստեղծվեցին դպրոցների կառավարման խորհուրդները:

— Դրանք սկսեցին ստեղծվել 1999թ. մարտից: 2005թ-ին ՀՀ կառավարության կողմից սահմանվեցին ՊՈԱԿ-ների տնօրենների ընտրության հիմնական չափանիշները: 2001թ. նոյեմբերին արդեն ընդունվել էր ՊՈԱԿ-ների մասին օրենքը, որի հիման վրա հիմնովին փոփոխվել էր հանրակրթական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը: 2010թ. ընդունվեց խորհրդի եւ տնօրենի ընտրության նոր՝ չորրորդ սերնդի լրամշակված կարգը, ինչը գործում է մինչ այսօր: Խորհրդի ընտրության հիման վրա Այունիքի մարզպետը պայմանագիր էր կնքում տնօրենի հետ մոտ 5 տարի ժամկետով: Դրանից հետո՝ նոր օրենքի ընդունմամբ (2009թ. հուլիսի 10) անորոշ ժամկետով պայմանագիր ունեցող տնօրենը պետք է վերապատրաստվեր եւ ստանար տնօրենի հավաստագիր: Դա պարտադիր համարվեց:

— Այունիքի մարզում քանի՞ դպրոց կա եւ քանի՞սն են մարզպետարանի ենթակայության ներքո:

— Այունիքում կա 119 դպրոց, որից մարզային ենթակայության տակ են 114-ը: 94-ում պետք է տեղի ունենար ընտրություն, իսկ մյուսների տնօրենները պայմանագիր ունեին եւ որոշակի ժամկետից հետո նույնպես մասնակցելու են վերապատրաստման դասընթացների, որպեսզի հավաստագիր ստանան: Առաջին փուլում հայտարարված մրցույթը բոլոր դպրոցներում էլ կայացավ, երկրորդ փուլում 32 դպրոցից կայացավ 30-ում, երրորդ փուլը դեռ շարունակվում է՝ մինչև 2012թ. մարտի 20-ը: Ութ դպրոցում էլ մրցույթ նշանակվել էր, բայց չկայացավ: Այդ դպրոցներն են՝ Ներքին Հանդի, Լեռնաձորի, Արավուսի, Սվարանցի, Կապանի №12, №13 եւ Գորիսի №1, Տանձատափի եւ Շենաթաղի հիմնական դպրոցները: Ներքին Հանդի, Սվարանցի, Արավուսի, Շենաթաղի, Լեռնաձորի եւ Տանձատափի դպրոցներում ընտրություն տեղի չի ունեցել, որովհետեւ հավակնորդներ չկային: Իսկ Կապանի №12 եւ №13 դպրոցներում հավակնորդներ եղել են, բայց մրցույթով չեն անցել: Գորիսի №1 հատուկ դպրոցի կարգավիճակը դեռեւս հստակեցված չէ:

— Այդ բոլոր նորամուծությունները, փոփոխություններն ի՞նչ տվեցին դպրոցին:

— Նորամուծությունները, փոփոխությունները դրական ազդեցություն ունեցան դպրոցների կառավարման վրա: Մանկավարժները ստացան լայն իրավունքներ՝ իրենց վարչական կարողություններն ու հմտությունները բացահայտելու, ինչու չէ՞ նաեւ պաշտոնական առաջխաղացում ապահովելու համար: Նոր փոփոխություններով բոլոր տնօրենները հայտնվեցին հավասար իրավական դաշտում: Վերապատրաստման դասընթացներն ընդլայնեցին տնօրենների իմացության դաշտը, նրանց դարձնելով իրենց պաշտատնքում ավելի վստահ: Եվ վերջապես, դպրոցի տնօրենն ի դեմս կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի, ստացավ իր գործունեությունը վերահսկող մարմին, որի առջև հաշվետու է ինքը:

Հարցազրույցը ՋԱՐԻՆԵ ՀԱՏԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

Պահանջ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

Սկիզբ՝ էջ 11

2011թ. ապրիլի 28-ի թիվ 627-Ն որոշումը:

2011թ. հունվարի 10-ին եւ 16-ին «Առավոտ» օրաթերթը հարցազրույց է հրատարակել Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանի հետ, որից մեջբերում ենք. «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Մաքսիմ Հակոբյանը պնդում է, որ Քաջարան գյուղի հողատարածքները կոմբինատը չի պատրաստվում շահագործել՝ չնայած այդ տարածքում են գտնվում մոլիբդենի հսկայական պաշարներ. «Իրականում էլ հողերը մեզ հիմա պետք չեն: Եղ գյուղի տարածքը կոմբինատին պետք չի: Ոչ էլ որեւէ մեկը ասում ա՛՛ տվեք ինձ, իրենք են հենց-հենց ոռոգողները գցել»: «Հիմա գյուղը ավիրո՞ւմ եք, թե՛ չէ՛» հարցին ի պատասխան էլ ասաց. «Սի ժամանակ ամբողջ հանրապետության տարածքով մեկ տարածվեց, որ հողը քո սեփականությունն ա, նրա տակի ընդերքն էլ հետը: Ու մարդիկ՝ կեսը հասկանալով, կեսը չհասկանալով, հողը վերցնում էին, 99 տարով պայմանագիր էին կապում՝ արտավայր, վարելահող կամ չգիտեմ թե՛ ինչ, հետո էլ մտքներին դնում էին ծախսին: Ես որ հետաքրքրվեցի, իմացա, որ Քաջարան գյուղում տե՛սք բան կա, հանրապետության նախագահին ասեցի, խնդրեցի, որ գերակա շահ ճանաչեն, որ էլ մարդիկ իրավունք չունենան օտարելու: Թե չէ կստացվի, որ ինչ-որ մի գյուղապետ, վերցնում է, ու Հայաստանի հանրեքը ծախում: Ես էլ առաջարկեցի, առաջարկել են, ու հիմա էլ առաջարկում են՝ թող դա ես վճարեմ, ձեւակերպումները փաստաթղթերով անեն, ինչ ուզում են՝ անենք, ինչ ցանկանում են՝ անենք, իրանք էլ թող ապրեն, ինչքան ուզում են ապրեն»:

«Այսինքն՝ չե՞ք ուզում գյուղը քանդել»՝ հարցնում է լրագրողը: «Որ ուզենանք էլ՝ չենք կարող հիմա քանդել, դա փողերի, ծավալների, մեծ գործերի հետ է կապված», - պատասխանել է Մաքսիմ Հակոբյանը: «Ուղղակի ուզում եք սեփականաշնորհե՞լ», - հետեւում է հաջորդ հարցը: «Դա սեփականությունն է: Եթե առնում էլ ենք, դա չի դառնում մեր սեփականությունը, մենք հետ ենք տալիս պետությանը, նորից պայմանագրով հետ ենք վերցնում՝ մշակման ժամանակաշրջանի տարիներով՝ կառուցապատման իրավունքով, մենք իրավունք չունենք մեր սեփականությունը լինի: Ուղղակի այնպես պիտի անենք, որ չվերցնեն էլ հողերը տան ուրիշին», - ասում է Մաքսիմ Հակոբյանը:

Հինք ընդունելով վերագրյալ՝ ակնհայտ է, միանշանակ եւ անվիճելի, որ ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 627-Ն որոշմամբ նախատեսված՝

- Հայաստանի Հանրապետության Այունիքի մարզի Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագիրը եւ բացահանքի ընդլայնման հեռանկարները իրականությանը չեն համապատասխանում,
- ՀՀ Այունիքի մարզի համայնքերի՝ Քաջարանի /181.7 հեկտար/, Արծվահիկի /257.62 հեկտար/, Սեւաբարի /91.53 հեկտար/, Աճանանի /9.5 հեկտար/, Չափ-

ԳՐԱԿԱՆ ՄԵՂՐԻ

Ներսես Խառապյան

Տպագրության և պատրաստում արձակի ժողովածու, որը լույս կտեսնի փարեվերջին: Խառապյանների փոխմիջ և Նաև աշխարհահռչակ դերասան, երաժիշտ Գիմփորի Խառապյանը, ով 2010թ. այցելել է Մեղրի:

*Կուշրուկուտը հասավ նրան
Ու ապրակեց՝ ի ցույց դաժան...
Շուրջը պարապ ամբոխ մի մունջ,
Վախեցած ու բերանը խուփ:*

*Մեկը չասաց՝ ինչ ես անում,
Իսկ թե որդին լիներ քո բույթ,
Որ արնախում ձագ է գայլի
Թե՛ կուշր փորով, թե անոթի:*

*Ապուշ, կյանքի ապրակն է հենց
Մրան ահա փողոց նեփել,
Ո՛ւմ վրա է ձեռքդ շաչում,
Հղիացածիդ չի էլ հասնում:*

Բախարը նման է...

*Բախարը նման է անառակ կեռք՝
Աչքը միշտ դրսում, անվերջ խարդավող,
Եվ նրա պազշուր համբույրի մեջ սուր
Վաղը դավելու խարդավանքն է մուր:*

*Ու մի օր թե քեզ թոցրեց նա վեր,
Վերից մի նայիր վարում կանգնածին,
Կյանքը սիրում է վեր ու վար անել,
Ցածուն կանգնածը ցածր չէ քեզնից:*

*Մանձերն այսօր քո ձեռքերում են,
Ջույգ ձիերը՝ խենթ, բայց եւ հնազանդ,
Մյանայու են բարձունքներն ի վեր,
Որ հասնեն անհաս աստղերին անգամ...*

*Քեզ թվալու է՝ ամուր ես նստած,
Եվ սանձերն էլ սանձեր չեն բնավ,
Այլ ձեռքերդ են քեզնից անբաժան՝
Պարրասար գապելու վարձը ձիերի:*

*Բայց ճիշտ այն պահին, երբ խարվես հանկարծ,
Թե կառքում հենց միշտ դու ես լինելու,
Բախարը քեզ այնժամ գեղնով է փայլու՝
Բիրտ մարակներով: Այդ էր վիճակված:*

*Այսօր վերում ես, վաղը վար կիջնես,
Կամ թե կնեղեն կամբիդ հակառակ,
Ավաղ, այս կյանքում ոչինչ կայուն չէ,
Եվ բախարն էլ սիրուն կին է անառակ:*



*Ցավի ուղին է ճշմարիտը լույս,
Ու փառապանքը՝ հավերժի ճամփան,
Ապրել այրվելով, գոծ լինելուց գոծ,
Ինքնուրացումից հաճույք սրանալ:*

*Ցանկությունը զենս՝ փորձություն դյուրող,
Որ հոյի է միշտ փորձանքի պտղով,
Լինել առօրյա երկրայինից վեր
Ու խաչվել այրոց մեղրերի համար:*



*Գոյս կայացավ, քո դուրը եղա,
Ապրելով թե ցավ ու թե բերկրություն,
Ճաշակեցի եւ շնորհներդ բյուր
Եվ աղերաբեր շունչ անխուսափ:*

*Ո՛վ էիր արդյոք, բարեկա՛ն, ոսո՛խ,
Ապրակդ ուժգին, համբույրդ կրքոտ,
Մեկ դրախտ էիր բերում ինձ շապլ,
Մեկ հասցնում սեւ դժոխքի դռան:*

*Օ՛, կյանք առեղծված,
Ինչ փորձություններ
Ունես դեռ պահած
Խեղճ գերուդ համար:*



*Լագուր լեռներում հովիվ լինեի,
Ազար ու անկախ, մարդկանցից հեռու,
Կապույտ երկինքը փանհքս լիներ
Եվ փունս ամեն թուփ ու ծառի շուր:*



Նկարում՝ Արմեն Ներսեսի Խառապյանը, Գիմփորի Վաղմի Խառապյանը եւ Ներսես Խառապյանը:

Ծնվել է 1947թ. Մեղրի քաղաքում: Ավարտել է Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, աշխատել է ՀՀ դատախազության համակարգում: Ներկայումս կենսաթոշակառու է: Բանաստեղծ է, արձակագիր: Լույս է ընծայել հետեւյալ գրքերը՝ «Կարոտի երգեր»(2003թ.), «Գիշերով եկար»(2006թ.), «Սորմոք»(2008թ.), «Դու հրաշք էիր կյանք»(2009)թ., «Այրեցիր ինձ»(2011թ.)(թարգմանվել է ռուսերեն):

*Հուրը արածեր լանջերին կանայ,
Խաղաղ գառների մայրնով անուշ,
Ապրածս կյանքը չար երազ թվար,
Եվ քո անունը հեռավոր մի հուշ:*

*Լուկ հեռավոր հուշ, եւ ոչ ավելի,
Որ հույզ չի բերում, չի բերում խոլում,
Խաղաղվեր իսպառ վիրավոր հոգիս
Վիշտ ու ցավ ներած թափառիկ քամուն:*

*Նեփերի քամուն եւ անուրը քո,
Որ աննձրի պես խեղդում է դեռ ինձ,
Քամին ոռոգում ընկած սար ու ձոր,
Փռչի դարձներ կասկանք վերջին:*



*Ջուր ես փրսում սառն աղբյուրից,
Ծամով աղջիկ, համով աղջիկ,
Գալարվում է մեքքը բարակ
Ու վառվում են աչքերդ բարկ:*

*Շողն արևի մագերիդ մեջ,
Կայծկլվում է կրակի պես,
Ատրված ասես գլխիցդ վեր
Հուրերացող ջան է վառել:*

*Ես մի պապակ, ծարավ անցորդ,
Դու իմ ճամփին կրակ վառվող,
Հայացքդ գուր մի փախցնի,
Հուրն աչքերիդ չես թաքցնի:*

*Կանգնիր խրքնած եղնիկ սարի,
Ջուր փուր, խմե՛մ քո սափորից,
Ինքդ անուշ, ջուրդ անուշ,
Ձեզնից ո՛րն է որից անուշ:*

*...Ջուրդ գինի արբեցնող,
Դու քո գինուց թունդ ու շեն շող,
Կիսեթանան փեր իմ Ասրված՝
Թե չհասնեն հրաշքին այս...*



*Դու կգաս այնժամ, երբ սեր չի լինի,
Կգան փրվելու անցյալի հուշին,
Ու ցնորափայլ քո մով աչքերում
Դեռ հին կրակը կցուրա թաքուն:*

*Կգան, հեռավոր, երբ ուշ կլինի,
Երբ հուշդ արդեն խամրած կլինի,
Միրո փեղ պաղած մոխիր կլինի,
Երբ ուշ կլինի, երբ ուշ կլինի:*

Ջերմ, թախճագորով հայացքդ մեղմիվ,

*Շոյելով աչքիս մուրջ խուսափուկ,
Կիների իմ մեջ հինի ապարդյուն,
Սակայն չի գրեմ, սակայն չի՛ գրեմ...*

Դու ճերմակ վարդեր շար էիր սիրում

*Այս ափին ճերմակ վարդեր են բացվում,
Գողպրիկ ու բուրյան ալիքվում անձիր,
Լույս երազներ են այսփեղ թեւածում,
Սակայն դու այն մյուս ափին մնացիր:*

*Չքնաղ վարդերի բույրը գզլիսի,
Շրշուրը հուշիկ անուշ հովերի,
Քո քաղցր հուշն են դեռ այսփեղ պահում
Ու վերադարձիդ հույսը փայփայում:*

*Ես գիտեմ, սակայն, դու երբ չես գալու,
Եվ գուր է այնպես փանջանքն այս անուր,
Օրար այն ափին, ասա, իմ անգութ,
Ո՛վ է քեզ հիմա ճերմակ վարդ բերում:*

*Այս ափին՝ ճերմակ վարդերի հրդեհ,
Յուր խրախճանք է ճերմակ բոցերի,
Լույս երազներ են թեւածում այսփեղ,
Մինչդեռ դու այն մյուս ափին մնացիր:*



*Մաքուր մնացիր դու իմ հուշերում,
Անաղաքս՝ ինչպես ձյունը առաջին,
Այրվող մարմերով գուրգուրեի քեզ,
Հաշմվեցին, մեռան հեռու օրերում:*

*Անմեղ մնացիր, դու իմ մեղսական,
Անարար՝ ինչպես կաթիլը ցողի,
Խեղքահան անող գինին կուտական,
Անձրեկից հեգո՛ր բուրմունքը հողի:*

*...Գեթ մեն-մի անգամ հանդիպեի քեզ,
Տաք շշեցալի խոսքերս չասված,
Այրվող մարմերով գուրգուրեի քեզ,
Եվ կուրծքս թրջեր լացդ ուշացած:*



*Մեղան բացեմ ծառի հովին,
Աչքս զցեմ աչքիդ մովին,
Շիկնես, քնքուշ ու ամոթխած
Հայացքդ վար իջնի խոնարհ:*

*Միրոք ծիսա նման ծովի,
Ափերին փա, ալեկոծվի՛
Էդ քո անուշ փեսքով գերված,
Հարբեմ՝ թասս շուրթիս չառած:*



*Մի գեղեցիկ կին այսօր ժպտաց ինձ,
Կարոտ մի կին էր, ժպտաց ու անցավ,
Քե՛զ՝ իմ հեռավոր, հիշեցի հանկարծ,
Մի լքված կարոտ հոգուս ծանրացավ:*

*Քե՛զ, իմ սիրելի, իմ դաժան, իմ լավ,
Քեզ փեսա հանկարծ նրա հայացքում,
Կարոտ մի կին էր - ժպտաց ու անցավ,
Մի լա՛ր մղկրաց ցաված իմ հոգում:*

Քեզ չհասկացա

*Դեռ այն ժամանակ քեզ չհասկացա,
Երբ ինձ սիրելով դու կարողացար
Ուրիշ ուխտի մարանին հագնել
Ու մեր դեռ չեղած օջախը քանդել...*

*Կյանքում հեգո էլ շար-շար բաներից
Արմանք-գարմանք եմ ես հաճախ ապրել,
Աչքի ընկերոջ սարքած դավերից,
Նենգամիտ կանանց դավերից խոցվել,
Բայց կարծես փույթ չէր:*

*Օ՛, դրանք թեթեւ կմոթոց էին,
Որ մրուր անգամ հոգուս չթողին,
Հուլի պես անցան ու մոռացվեցին՝
Լուկ բորբոքելով մորմորը քո հին,
քոնն ուրիշ էր...*

*Ախր դու այդ ո՛նց, ո՛նց կարողացար
Ուրիշ մեկի փան ճրագը դառնալ,
Ինքդ ջերմության աղբյուր անսպառ՝
Ջերմություն հայցել օրարի դրան
երիցս հիմար...*



*Թող որ քողպիկ էր,
Բայց եւ գողպրիկ էր՝
Որ անուշ սե՛ր կար,
Որ քեզ համար էր:
Դեռակը բան էր,
Գալուդ կարոտ էր...*

*Հիմա՛ հասկացա,
Այս ո՛ւշ հասկացա,
Որ քեզ սեր չէր պեքք,
Տո՛ւն էր պեքք միայն,
Եվ այն ունեցար...
Բայց... փունք, ավաղ,
որում սեր չկար,
Օջախ կդառնա՛ր...*

Ավանդույթները շարունակվում են...

ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Կապանի №1 հիմնական դպրոցի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցիչ Ալավիկ Յակոբյանն այն համոզմունքում է, որ ազգային բանակում օրինակելի ծառայության հիմքերը դրվում են այդ առարկայի դասերի ժամանակ: Զինվորական պատրաստությունը, որ դպրոցականները տիրապետեն հրաձգության հիմունքներին: Եվ ջանքերը պտուղներ են տվել: 2005-ից սկսած կրթօջախի հրաձիգների թիվը հաղթող է ճանաչվել հրաձգության թաղաքային մրցումներում, իսկ անհատական պայքարում 2009-ին Տիգրան Յանթարյանը զբաղեցրեց երկրորդ հորիզոնականը, 2010-ին Արզումանյան Նարեհ՝ առաջին: Իսկ հրաձգության մարզային մրցումներում, մկիրված հայկական պետականության վերականգնման 18-րդ տարեդարձին, ժողովրդականությանը ծանաչվեց լավագույնը: Կրթօջախի պատանի հրաձիգներն իրենց լավագույն կողմերով են դրսևորել 2011-ի հունիսին Երևանում կայացած «Գիպուկ հրաձիգ» հանրապետական մրցումների եզրափակիչ փուլում՝ մկիրված Գարեգին Նժդեհի ծննդյան 125-ամյակին: Մարզային փուլի հաղթողները՝ մոտ 120 մասնակից, ուները չափեցին եզրափակչում, Կապանի թիմում ընդգրկված էր ինչպես դիպուկահար: Մրցաշարի պայմանն էր 50մ հեռավորությունը «ՏՕ3-8» մարզական հրացանով թիրախին անվերայ կրակոցներ հասցնել: Տղաների անհատական առաջնությունում հաղթող ճանաչվեց Կապանի №1 դպրոցի աշակերտ Տիգրան Յարոսյանը, իսկ աղջիկների մեծապայքարում Մարիաննա Գասպարյանը ճանաչվեց երկրորդը: Նրանք պարգևատրվեցին ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կողմից սահմանված մեդալներով եւ վկայագրով: Կրթօջախի հավաքականը 18 թիմերի պայքարում գրավեց անկասկած բարձր՝ չորրորդ տեղը: Իսկ այս ուստարում դիպուկահարների նոր

կազմակերպված թիմը ռազմամարզական խաղերում հրաձգություն ձեռնարկել է առաջնությունը: Պատանի դիպուկահարների՝ հանրապետական մրցումներում հաջողությանը նպաստել են սրտացավ մարդիկ՝ Կապանի ավտոդպրոցի տնօրեն, մայր Արամայիս Յարոսյանյանը, ով անհրաժեշտ հրազեն տրամադրեց եւ



Լուսանկարը՝ Ա. Ավակյանի

պարավունքների մեկնելու համար փոխադրամիջոց հատկացրեց, Մետրոպոլիտանյանը, ով պատանի հրաձիգների հետ անհրաժեշտ աշխատանք էր տարել, իսկ Կապանի քաղաքապետի տեղակալ Վարդան Գեւորգյանի տրամադրած փոխադրամիջոցի շնորհիվ հնարավոր դարձավ ժամանակին տեղ հասնել եւ հանրապետական մրցմանը մասնակցել:

Դպրոցում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ամուր դրվածքի մասին է խոսում այն փաստը, որ կրթօջախի շրջանավարտները, ծառայելով ազգային բանակի շարքերում, կրակային պատրաստությունից բարձր արդյունքներ են ապահովում՝ արժանանալով խրախուսանքների՝ պատվոգրեր, շնորհակալական նամակներ կրթօջախին եւ ծնողներին, նաեւ կարճաժամկետ արձակուրդ: Կրթօջախում՝ ով մտնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի կաբինետը, հաղորդակից է լինում դպրոցի նախնական սաների հաջողություններին եւ ջանում է կրկնել այդ հաջողությունները: Ահա այսպես՝ ավանդույթները շարունակվում են...

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆԱՆ

ՆՆՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Գորիսի №7 մանկապարտեզում (տնօրեն՝ Կարինե Մինասյան) Ամանորի առթիվ տեղի ունեցան մի շարք միջոցառումներ, որոնք հիացմունք պատճառեցին եւ երեխաներին, եւ մերկա գտնվող ծնողներին: Միջոցառումների հետաքրքիր սցենարը, երաժշտական ու նկարչական բարձրաճաշակ ձեւավորումը, փոքրիկներից յուրաքանչյուրի ակտիվ դերակատարությունը, թատերականացված տեսարանների ռեժիսորական խելամիտ լուծումները չէր կարելի չնկատել: Հատկապես ուշագրավ էր նախադրարանի ավագ խմբի տղաների հանդեպ, որը կազմակերպվեց խմբի դաստիարակ էլմիրա Ալվազյանի եւ երաժիշտ Լիլիթ Ալեքսանյանի ջանքով, ինչի համար, նաեւ մյուս ծնողների անունից, շնորհակալություն են հայտնում նրանց, ցանկանում նորանոր հաջողություններ երեխաների դաստիարակության գործում:

ՄԱՆՈՒԵԱԿ ԱՆԵՄԱՆԱՆ

ՆՆՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Կոռնի՝ 78-ամյա Զարիկ Շահյանին Ամանորի նախօրեին սրտի սուր նոպայով տեղափոխեցին հիվանդանոց: Չեռնարկված միջոցների արդյունքում շտապ օգնության ծառայության եւ սրտաբան Ավետյանա Իսախանյանի ներդրած ջանքերի շնորհիվ փրկվեց հիվանդի կյանքը: Այդ ամենի համար, թեեւ դա մեծ առաջին դեպքը չէ, երախտագիտություն եւ հայտնու շտապ օգնության եւ բուժող անձնակազմերին, առանձնապես բժշկուհի Ավետյանա Իսախանյանին:

ԳՐԻԳՈՐ ՇԱՅԱՆ, Բ. ՍԻՍԻԱՆ, ԴՊՐՈՅԱՆ 2/24

ՆՆՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Ուզում են խորին շնորհակալություն հայտնել Ազարակ քաղաքի «Պրես-Ստեյն» ՍՊԸ-ի կրպակի աշխատող Անգին Մարգարյանին՝ բոլոր հաճախորդների բարեխիղճ ու բարեհամբույր սպասարկման համար: Նույնպիսի պատրաստակամությամբ ու սիրով, ընդամենը հեռախոսային զանգով, նա վերալիցքավորում է ազարակցիների բջջային հեռախոսները, ինչի համար նրան հաճախ անվանում են 2-րդ շտապ օգնություն:

ԷԼՄԻՐԱ ՊՐՈՐՈՅԱՆ

Այունյաց երկիր

Տ Ա Ս Ն Օ Ր Տ Ա Թ Ե Ր Թ

Գլխավոր խմբագիր՝ ԱՍՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32: Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

ՐՆՁԱՆԻ տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Ս 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 30.01.2012թ.:

Պահանջ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին

ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

Սկիզբը՝ էջ 14

նիի /16.1 հեկտար/, Սյունիքի /51.8 հեկտար/ հողերի նկատմամբ ճանաչումը բացառիկ գերակա հանրային շահ է, այլ հետապնդում է մասնավոր անձի շահ:

■ Հետեւյալ հիմնավորումները, թե ծրագրի իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատերերի շահերից, քանի որ՝ ա. ծրագիրն ընդերքօգտագործման բնագավառում ունի համապետական կարելուր նշանակություն, բ. ծրագրի իրականացումը կապահովի Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի եւ արտահանման ծավալների եւակն աճ, գ. ծրագրի իրականացումը մեծապես կնպաստի երկրի տնտեսական անվտանգության ամրապնդմանը, դ. ծրագրի իրականացումը լուրջ խթան է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համար՝ ուղղակի կեղծիք են:

ՀՀ կառավարության 627-Ն որոշումը նաեւ փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում բացակայում է այն

հայեցակարգը, թե որ հանքավայրերը ընդհանրապես չի կարելի շահագործել, որ հանքավայրերը պետք է պահպանվեն ապագա սերունդների համար կամ առկա յուրաքանչյուր հանածո հարստությունից տարեկան ինչ քանակություն կարելի է օգտագործել, չկա նույն հանքատեսակի տարեկան օգտագործման չափաբաժնի սահմանումը:

Հանքահանությունն օգտակար ու տանելի է իր չափի մեջ: Խորհրդային տարիներին Քաջարանի պղնձամուլիթե-նային հանքավայրը շահագործվում էր տարեկան 7-8 միլիոն տոննա ծավալով, սակայն այժմ ցանկանում են տարեկան օգտագործել մինչեւ 50 միլիոն տոննա հանքաքար, երբ տասնամյակներ առաջ ծրագրվել էր այդ հանքավայրը շահագործել 300-350 տարիների ընթացքում:

Հաշվի առնելով ոչ միայն վերը թվարկվածը, այլ նաեւ այն, որ ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի թիվ 627-Ն որոշումն ընդունվել է Միջազգային նորմերի եւ ՀՀ օրենսդրության կոպիտ խախտմամբ՝ պահանջում ենք անհապաղ անվավեր ճանաչել այդ որոշումը:

«Ծառանդություն» Կուսակցության վարչություն 24 հունվարի 2012թ., Երևան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Հացավանի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահի (3.1-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Հացավանի գյուղական համայնքի /այսուհետ՝ Համայնք/ ղեկավարի հայրապարտում է մրցույթ Համայնքի ղեկավարի աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ հետեւյալ համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար.

Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ (ծածկագիր 3.1-1)

Իրականացնում է Աշխատակազմի հաշվապահական հաշվառման գործառնությունները, կազմում է ֆինանսական հաշվետվությունները, ապահովում է հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության պահանջների կատարումը: Իր լիազորությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին ու ճիշտ կազմելու համար: Կատարում է Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները: Ապահովում է Աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը եւ լրացնում համապատասխան փաստաթղթերը: Իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում է Աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաեւ առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր եւ այլ գրություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է.

Առնվազն միջնակարգ կրթություն, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրության եւ իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կանցկացվի 2012 թվականի մարտի 13-ին ժամը 11.00-ին ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի սոցիալական ծառայության շենքում: Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները եւ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ծելը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/նեթի/, վկայականի/ներ/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գրքույկային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գրքույկային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչեւ 18.00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2012 թվականի փետրվարի 20-ը, մինչեւ ժամը 18.00-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները փաստաթղթեր հանձնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաեւ պաշտոնի անձնագրին եւ հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Համայնքի ղեկավարի աշխատակազմ (հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Հացավան, հեռ.՝ (093) 40 47 61 կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ եւ ՀԳՄ վարչություն (հասցե՝ ՀՀ ք.Կապան, Գ.Նժդեհի 1. Հեռ.՝ (0285) 2 35 50):

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Այունյաց երկիր» խմբագրակազմը ցավակցում է Նարինե Մովսիսյանին՝ սիրելի հոր մահվան կապակցությամբ:

ԿՈՐԵԼ Է Կապանի №10 միջնակարգ դպրոցի 1994-95 ուստարվա շրջանավարտ Սիլվա Իշխանի Գեւորգյանի միջնակարգ կրթության № 098865 ատեստատը: Համարել անվավեր: